



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

82

S-98

Umpy
204 or

1147

Umpy
Umpy

Umpy
1891.

82-7

5-98

ՄԱՐԿ ՏՈՒԷՆ

ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ

(Արտատպւած «ՄՈՒՐՆ» տպագրից)

Թ Ի Ֆ Լ Ի Ս
ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՅՈՒ
1891

82

6057

Թարգմանիչ

S-98

ՄԱՐԿ ՏՈՒՆ

47

118

ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ

786-57-78

1419
2001

2

(Արտատպւած «ՄՈՒՐՃ» ամսագրից)



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

1891

Дозв. ценз. Тифлисъ. 11 Января 1891, г.
 Типогр. М. Д. Ротиніанца, на Голов. пр. соб. д. № 41.

Մարկ Տուէնը—ամերիկական կատակարան է: Նա
 սիրւած հեղինակ է իւր երկրում և չարզանք է վազելում
 Եւրոպայում: Նորա շրւածքները թարգմանւած են եւ-
 ոպական լեզուներով:

ԱՍՈՒՍԻՆՆԵՐԻ ՎՐԴՈՎՍՈՒՆՔԸ ԲԿԱՑԱԽԻ ՊԱՏՃԱՌՈՎ

(Պատմել է Հեղինակին Նիւ-Նօրքէ քաղաքացի Մակ Ուիլեամսը, որին Հեղինակը պատահել է երկաթուղու կառքում):

Պատմածս թերաբերում է, այսպէս սկսեց Ուիլեամսը, այն ժամանակին, երբ կրուպ անւանւած տարափելի և անբուժելի բկացաւը տարածւած էր մեր քաղաքումը և ահ էր զցել բոլոր մայրերի վերայ: Այդ ժամանակն էր, որ ես իմ կնոջ ուշադրութիւնը հրաւիրելով մեր փոքր աղջիկ Նելլու վերայ՝ ասացի.

—Նս, հոգեակս, եթէ քո տեղ լինէի, թոյլ չէի տալ, որ երեխան կրճի այս սոճի ճիւղտը:

—Էհ, ի՞նչ փնաս ունի, սիրելիս, պատասխանեց կինս և միևնոյն ժամանակը պատրաստեց պաշտպանելու երեխայի արածը, որովհետև կանայքը չեն կարող առանց հակառակելու ամենալու խորհուրդն անգամ ընդունել: Իմ խօսքը պատկած կանանց մասին է:

—Բոլորը գիտեն, նկատեցի ես կնոջս, որ սոճին ամենից անսննդարար ծառն է, որ կրճում է երեխան:

Կինս, որ ձեռքը տարել էր ճիպոտը առնելու, չետ քաշեց իւր ձեռքը: Լաւ երևում էր, որ տիկինս ներքուստ կռուում է և վերջապէս ասաց.

— Դու, ի հարկէ, սիրելիս, այդ բանը աւելի լաւ իմանում կը լինես, կամ գոնէ երևակայում ես, որ գիտես Բայց բոլոր բժիշկները ասում են, որ սոճի ծառի մէջ եղած հիւթը, տերպենտինը, շատ օգտակար է այն երեխաներին, որոնց մէջքը և երիկամունքը թույլ են կազմւած:

— Հա՛, եթէ այդպէս է, ես սխալ եմ: Դէ՛ ես չը գիտէի, որ Նելլու երիկամունքը և ողնաշարը փխտւած են և որ բժիշկը խորհուրդ է տւել...

— Ո՞վ ասաց, թէ աղջկանս մէջքը և երիկամունքը փխտւած են:

— Միթէ՞, հոգեա՛կս, այս բոպէին դո՛ւ չէի՞ր ակնարկութիւն անողը:

— Ի՞նչ ես բաներ հնարում: Նս այդ տեսակ ոչ մի ակնարկութիւն չեմ տրել:

— Ինչպէ՞ս, աղաւնեակս: Դեռ երկու բոպէ էլ չի անցել, որ դու ասացիր թէ...

— Փիլիսոփայութիւններ մի անիլ, խնդրեմ: Ես ի՞նչ գիտեմ, ինչ ասացի: Աղջկայ ճիպոտ կրծիւց ոչ մի փնաս չի կարող պատահել. այդ ինքդ էլ լաւ գիտես դու: Թող կրճի իրան համար. ի՞նչ ես ուզում:

— Բաւական է, հոգեակս, ես այժմ հասկացայ քո կարծիքը այդ բանի մասին և կը գնամ կը կարգադրեմ, որ հէնց այսօր Նելլու համար պատրաստեն

երկու կամ երեք սալ լաւ սոճի փայտ: Իմ երեխան չը պէտք է պակասութիւն զգայ, թէ ինչ է, ես...

— Ո՛ւհ, գնաս մէկ դու քո գործիդ և ինձ հանգիստ թողնես: Կինդ մի խօսք չը պէտք է ասի, որ դու չը բռնես նորանից: Նւ չետոյ կը վիճես-կը վիճես, մինչև որ ինքդ էլ չես իմանալ, թէ ինչից սկսեց բոլոր խօսակցութիւնը:

— Լաւ, քո ասածը լինի. բայց ախր հետևողութիւն չկայ քո տոյն վերջին նկատողութեան մէջ, որով...

Բայց իմ անկոտորում կինը դեռ չ'վերջացած խօսքիցս բռնկեց և դուրս վազեց, հետը տանելով և աղջկաս:

Երեկոյեան, սեղանի վերայ նորից տեսայ կնոջս, բայց սարսափած, սփրտնած: պատից աւելի սպիտակած երեսով:

— Գիտե՞ս ինչ, ա՛ մարդ, շտապեց նա ասելու, դարձեալ մի զոհ: Փոքրիկ Գէորգը հիւանդացել է:

— Զը լինի՞ կրուպով:

— Այո կրուպով:

— Բայց մի՞թէ փրկելու յոյս չը կայ:

— Ոչ մի. Տէր ամենակալ, ի՞նչ պէտք է լինի մեր վիճակը:

Այդ ժամանակ դայեակը բերաւ Նելլուն բարի գիշեր ասելու և մօր ետեից գիշերւաց աղօթքը կրկնելու: Աղօթքի ժամանակ ինչպէս եղաւ՝ երեխան հազաց. Կինս սարսափեց և երեսի վերայ վաչր

ընկաւ, կարծես կայծակահար եղած: Բայց շուտով ոտքի թռաւ՝ երկիւղից առաջացած հոգսերին նւիրելու:

Նա հրամայեց Նելլու մահճակալը մանկասեանեակից հեռացնել մեր ննջարանը և գնաց ստուգելու հրամանի կատարումը: Ինձ էլ քաշ տւեց իւր հետը:

Մեծ արագութեամբ ամեն բան կարգադրւած էր: Կնոջ առանձնարանում դրւած էր մահճակալ դայեակի համար: Բայց կինս յանկարծ մտաբերեց, որ այստեղ մենք շատ հեռացած կը լինենք միւս երեխայից և դժար վիճակի մէջ կը լինենք, եթէ ցաւեր սկսեն նորանում: Խեղճ կին-արմատս սարսափից կրկին դունատեց:

Այն ժամանակ երեխայի և դայեակի մահճակալները տեղաւորեցինք հարեան սենեակում:

Հագիւ գործը վերջացրել էինք, կինս մոաբերեց, որ Նելլին կարող է Գէորգից վարակել: Այդ նոր ծագած կասկածը այնպէս վրդովեցրեց նորան, որ մենք չը գիտէինք՝ էլ ինչպէս նորան հանգրստացնենք: Աներեւակայելի արագութեամբ դուրս հանեցինք մահճակալները մանկասենեակից: Կինս այնպէս կատաղի կերպով շտապում էր, որ քիչ մնաց ջարդուփշուր անի Նելլու մահճակալը:

Մենք իջանք ստորին յարկը, բայց այնտեղ դայեակի համար չը կարողացանք տեղ յարմարեցնել, մինչդեռ կինս մեծ յոյս էր դրել դայեակի փորձա-

ռութեան վերայ: Ստիպւած՝ մենք կրկին տարանք բոլոր իրեղէնները մեր ննջարանը և վերջապէս փութորիկից ցրիւ եկած և նորից բռնը գտած Թուչունների նման՝ ուրախացանք, երբ կարգադրութիւններս իրագործեցինք:

Կինս անհամբեր վազեց մանկասենեակը տեսնելու՝ ինչ է այնտեղ կատարւում: Բայց շատ շուտ դարձաւ նոր սարսափով և հարցրեց ինձանից:

— Սա ի՞նչ է նշանակում, փոքրիկը ձիգ քնում է:

— Հոգեա՛կս, դու լաւ գիտես, որ մեր փոքրիկը միշտ լաւ է քնում:

— Գիտեմ, գիտեմ: Բայց այժմ՝ նա ուրիշ կերպ է քնած: Նա կարծես... կարծես... Այնպէս հանգիստ չունի է քաշում... Տէր Աստուած, ես վախենում եմ...

— Դէ՛ հոգեակս, նա միշտ հանգիստ է քնում:

— Ա՛խ, այդ գիտեմ: Բայց հիմի այդ բանը ինձ կարծես վախեցնում է: Նորան հսկող աղջիկը շատ է ջահիլ ու անփորձ: Մարիամին ուղարկենք նորա մօտ. ո՞վ գիտէ, ինչ կարող է պատահել այնտեղ:

— Այդ ասենք՝ լաւ ես մտածել: Բայց քեզ ո՞վ պէտք է օգնի, հարցրի ես:

— Այ, դու կարող ես ամեն բանում ինձ օգնել: Այսպէս սարսափելի ժամանակ՝ ես ոչ ոքի ինքնուրոյն գործ չեմ հաւատալ: Ինքս պէտք է անեմ:

Ես կնոջս պատասխանեցի, որ ես անվայել կը համարեմ պառկել և քնել—նորա վզին գցելով մեր հիւանդ երեխայի խնամելը և հոգատարութիւնը ամ-

բողջ տանջալի գիշերը: Բայց կինս ինձ հանգստաց-
րեց: Պառաւ Մարիամը գնաց առաջնայ պէս մանկա-
սենեակում մնալու:

Նելլին քնի մէջ երկու անգամ հազաց:

— Ա՛խ, ի՞նչ եղաւ բժիշկը: Ա՛ մա՛րդ, սենեակումը
շատ շոք է, անտանելի է: Փակիր վառարանի պահակը:
Կատարեցի պատէրը. բայց նայելով ջերմաչա-
փին, որ ցոյց էր տալիս միայն 16°, զարմացաւ թէ
ինչու է այդ աստիճանը շատ երեւացել հիւանդ երե-
խայի համար:

Այդ ժամանակ կառապանը քաղաքի հեռու
ծայրից տուն դարձաւ, լուր բերելով, որ մեր բժիշկը
ինքը հիւանդ է և պառկած է անկողնում: Կինս նա-
յեց ինձ վերայ մոլոր հայեացքով և յուսահատ ձայ-
նով ասաց.

— Ես այստեղ ճակատագիրս եմ տեսնում: Նրեւի
մեղ այդպէս է վիճակւած: Նա առաջ երբէք, երբէք
հիւանդ չէր լինում: Նրեւի Աստուծու օրէնքի դէմ
ենք ապրել, ահա որտեղ է բանը: Քանի հազար
անգամ քեզ ասել եմ այդ մասին: Այժմ պտուղները
տեսնում ես: Մեր երեխան էլ չի առողջանալ: Նրանի
քեզ, որ այս դասը դու չես զգում: Իսկ ես ինքս
ինձ չեմ ներիլ երբէք.

Ձը ցանկանալով ի հարկէ կնոջս վիրաւորելու և
միայն անզգուշութիւնիցս ես պատասխանեցի, որ ես
երբէք չեմ էլ մտածել, թէ մենք անազնիւ, անբա-
րոյական կեանք ենք վարել:

— Ա՛ մարդ, ուզո՞ւմ ես այժմ էլ Աստուծու բար-
կութիւնը երեխիս գլխին թափես:

Կինս սկսեց լալ և յանկարծ բացականչեց:

— Բժիշկը գոնեա ղեղեր ուղարկէ՛ր:

Ես պատասխանեցի՝

— Ի հարկէ: Ահա ղեղերը: Ես սպասում էի յար-
մար բոպէի, որ քեզ հաղորդեմ:

— Դէ, որ այդպէս է, տուր այստեղ շուտով,
դէհա: Թէ չե՞ս հասկանում, որ ամեն մի վայրկեանը
թանգ է: Ի՞նչ եմ ասում. ի՞նչ եմ անում ղեղերը,
երբ բժշկի ասելով՝ այս հիւանդութիւնը անբու-
ժելի է:

Ես պատասխանեցի, որ քանի որ երեխան կեն-
դանի է, յոյսներս չը պէտք է կորենք:

— Յոյսնե՞րս, ճշաց կինս, հասկանում ես ի՞նչ
ես խօսում, չ՛ճնա՞ծ երեխայի չափ էլ... Սա ի՞նչ է
նշանակում, ղեղ-ստոմանակի վերայ գրած է «ժամը մի
անգամ մի թէյ գդալ»: Ժամը՞ մի անգամ: Կարծես
թէ երեխայի կեանքը փրկելու համար մի տարի ժա-
մանակ ունենք: Օհ, շտապի՛ր, ա մարդ, ղեղը բաց
արա: Դու մի հացի գդալ ա՞ծա. դէհա, շուտ արա:

— Բայց, սիրելիս, յանկարծ հացի գդալից...

— Հոգիս մի հանիլ, Աստուած սիրես՝ մէկ է...

Ա՛ռ, ա՛ռ, ընդունիր այս ղեղը, իմ սիրունիկս, իմ
քաղցրիկս, մի քիչ դառն կը լինի, բայց յետոյ՝ Նել-
լիս, մայրիկի աղջիկը, կ'առողջանայ: Այ, ա՛յդպէս,
այ, այ: Ապրես: Դէ հիմի գլուխդ դիր մայրիկի կրծ-

քին և քնիր, աչքերդ փակիր, փակիր, սիրունիկս... Մհ, ես գիտեմ, նա մինչև էգուց չի ապրիլ: Գիտես ինչ (դարձաւ նա ինձ). ե՛կ դեղը տանք հացի գդալով ամեն մի կէս ժամից յետոյ: Թէ ասում եմ, երեխային մի քիչ էլ բելադոն տանք, օկոնիտ տանք, կ'օգնեն: Գնաս, ա՛ մարդ, բերես: Բայց սպասիր, լաւ կը լինի՝ ես ինքս գնամ: Դու այսպէս բաների գլուխ չ'ունես:

Շուտով գորանից յետոյ մենք պառկեցինք քնելու՝ երեխայի մահճակալը մօտիկացնելով կնոջս բարձին: Այս տար ու բերը ինձ լաւ յօգնեցրեց, այնպէս որ հազիւ պառկեցի՝ քունս սաստիկ տարաւ: Բայց կինս զարթեցրեց:

— Սիրելի՛ս, ասաց նա, վառարանի պահակը հօ բաց չի՞:

— Ոչ:

— Ես էլ այդպէս էի կարծում: Վերկաց, մէկ բաց արա՛. սենեակումը ինչ որ շատ է ցուրտ:

Ես կատարեցի նորա խնդիրքը և կրկին քնեցի: Բայց մի քանի ժամանակից յետոյ՝ կինս ինձ նորից զարթեցրեց.

— Որ երեխայի մահճակալը քո անկողինն մօտեցնես, լաւ կ'անես. վառարանին մօտ կը լինի երեխան՝ կը տաքանայ:

Ես ուզում էի մահճակալը տեղափոխել, բայց ոտքս զիպաւ գորգին և երեխան զարթնեց: Աինս օկսեց նորան քնացնել, իսկ ես մնջացի: Կարճ ժամանակից յետոյ լսեցի կնոջս շշնչալը:

— Սիրելիս, սագի ճրագու է հարկաւոր, մենք ունենք, բայց պէտք է բերող լինի: Զանգը տուր, աղախինը գալ:

Քնաթաթախ վերկացայ և յանկարծ կոխ տւի կատուին, որ սաստիկ ծիչ հանեց: Ես քացով տւի նորան, բայց ոտքս զիպաւ բազկաթռոխ:

— Ա՛ մարդ, ի՞նչու ես լուսաւորում սենեակը. գիտես, որ երեխան կարող է զարթնել:

— Մէկ չը տեսնե՞մ, ո՞ր տեղս եմ ջարդել կամ վիրաւորե՞լ:

— Դէ որ այդպէս է, հէնց բազկաթռոն էլ նախիր... կոտրած է լինելու անպատճառ: Խեղճ կատու. եթէ քացիդ նորան հասած լինէր...

— Աստուի դարդը մէկ թող է՛: Այս բաները տեղի չէին ունենալ. եթէ դու Մարիամին այստեղ պահած լինէիր, որ նա ինքը կատարէր այս նորան միայն վերաբերելի գործերը:

— Ամօ՛թ քեզ, դեռ տղամարդ ես. ես կարծում էի, դու կը քաշւես այդպիսի բաներ ասել: Ես վրդովւում եմ, երբ լսում եմ, որ դու ինձ ամենաչնչին օգնութիւններ չես կարողանում անել այսպիսի սարսափելի րոպէներում, երբ մեր երեխան...

— Լաւ, լաւ, լաւ. բոլորը կ'անեմ՝ ինչ ուզում ես: Բայց զանգակ տալը գուր է, ամենքը քնած են: Ո՛րտեղ է զրւած սագի ճրագուն:

— Մանկասենեակի վառարանի մօտ: Եթէ ինքդ ես գնում, ասա՛ Մարիամին, որ...

ես բերի ճրագուն և պառկեցի քնելու. բայց կինս ինձ հանգիստ չը թողեց:

— Գիտես, սիրելիս, որ ես քեզ նեղութիւն տալուց ինքս տանջւում եմ, բայց սենեակը էլի ցուրտ է, ճրագուն քսել չի կարելի: Վառարանը մէկ վառես: Փայտը դարսւած է, միայն լուցկին վառես ու կպցնես՝ բաւական է:

Վերկացայ տեղիցս, վառարանը վառեցի և վհաւած կերպով ընկայ աթոռի վերայ:

— Ինչո՞ւ ես աթոռի վերայ նստում, ա՛ մարդ, կը մրսես: Մտի՛ր անկողինդ:

Երբ որ պառկում էի, կինս ասաց.

— Մի քիչ էլ սպասի՛ր. Նեղին մի անգամ էլ դեղ ընդունի:

Դեղն էլ տւի: Դեղը փախցնում էր երեխայի քունը: Կինս հէնց որ տեսնում էր, որ երեխան զարթնել է, իսկոյն նորան մերկացնում էր ու մարմինը սագի ճրագու քսում: Ես դարձեալ քնեցի և դարձեալ ինձ զարթեցրին:

— Սիրելի՛ս, մի տեղից փչում է և սաստիկ է փչում: Իսկ այս հիւանդութեան ժամանակ քամին շատ վնաս է: Երեխայի մահճակալը մօտիկացրու կրակին:

Այս պատուէրը կատարելուց՝ ոտքս դարձեալ դիպաւ գորգին. ես բարկացայ և զայրոյթից վեր առի գորգը վառարանի զցելու. բայց կինս անկողնից թաւաւ և ձեռքիցս խկեց գորգը: Մենք մի թեթեւ կուռ-

ցինք: Փոքր քնելուց յետոյ՝ ես վերկացայ և կտաւատի սերմ դրի երեխայի կրծքին:

Որովհետեւ վառարանում կրակը ինքն իրան չի մնում՝ հանգչում է, ուստի ամեն մի քանի րոպէն վեր էի կենում և ուղղում էի փայտերը: Այս հանգամանքից օգուտ քաղեց կինս և նա էլ քսան րոպէից յետոյ երեխային զեղ էր տալիս: Ժամանակ-ժամանակ, այն էլ բաւական ստէպ, փոխում էի կտաւատի սերմը և մանանեխ ու ուրիշ սպեղանի էի դնում երեխայի մարմնի ազատ մնացած տեղերում: Այս բոլորը մի կերպ տանում էի. բայց առաւօտեան դէմ՝ փայտերը բոլորովին այրւեցին և կինս ստիպեց, որ ես զնամ փայտանոցը և փայտի նոր պաշար բերեմ: Ես չը համբերեցի և ասացի.

— Հոգեակս, փայտ բերելը շատ էլ հեշտ ու հաճելի չէ: Երեխային կարելի է տաքացնել լաւ ծածկելով: Փոխենք մարմնի վերայ զրած դեղերը և այնուհետեւ...

Կինս մի աղմուկ հանեց, որ, ի՛նչ արած, զնացի մի խտիտ փայտ բերի, որից յետոյ ընկայ անկողինս և այնպէս խամփացրի, ինչպէս ընդունակ են Ֆիզիքսայէս և հոգեպէս շատ յոգնած մարդիկը: Առաւօտը՝ լուսաբացին՝ ես զգացի մի խիստ հարւած, որ ինձ սթափեցրեց: Կինս նայում էր ինձ վերայ մոլոր հայեացքով և վրդովմունքից շնչասպառ էր լինում: Մի կերպ ուժը ժողովելով՝ նա ասաց.

— Բոլորը վերջացաւ, բոլորը կորաւ: Տե՛ս, ի՛նչ-

պէս երեխան քրտնած է: Ինչ անենք այժմ, Տէր Աստուած, Տէր Աստուած:

— Հեր օ՛րհնած, մի՞թէ կարելի է այդպէս վախեցնել: Տէր Աստուած, չը գիտեմ՝ ինչ անեմ: Որ այդպէս է, նորից ճրագու քսի՛ր ու ղենքերեխային քամի տեղ, որ...

— Օհ, ինչ խելառն ես: Ամեն մի բոպէն այստեղ թանգ է: Նուտով գնա բժշկի ետեւից: Ինքդ գնա՝ — և նորան ասա, գլխին զիր վերջապէս, որ պէտք է գայ այստեղ ինքը՝ կենդանի թէ մեռած:

Ես վազեցի, հիւանդ բժշկին ոտքի կանգնացրի և հետո առի ու տուն եկայ: Նա քննեց նեղուն և յայտնեց, որ նա մեռնելու ամենեւին ցանկութիւն չունի: Ես ի հարկէ շատ ուրախացայ, բայց կիսաայնպէս բարկացաւ, կատաղեց, որ կարծես թէ բժիշկը նորան վիրաւորել էր իւր խօսքով: Յետոյ նա ասաց, որ երեխայի հազի պատճառը նորա կոկորդը ընկած մի որ և է իրի աննշան գրգռումից է առաջ եկել: Ես կարծում էի՝ թէ կիսա բժշկի այդպիսի խօսքերի վերայ դուրս կ'անի նորան սենեակից: Բժիշկը աւելացրեց յետոյ, որ եթէ երեխան մի անգամ սաստիկ հազայ, կոկորդը կարող է մաքրւել: Եւ արդարեւ բժիշկը տեց երեխային մի ինչ որ զեղ, որից նորա հազը սաստիկ բռնեց և կոկորդից դուրս թռաւ մի կտոր բարակ բան:

— Ձեր աղջկը կրուպով հիւանդ է, յայտարարեց բժիշկը: Կարելի է նա մի որ և է ճիւղի կտոր

կամ ճիւղոտ է կրծել, որից մի կտոր մնացել է կոկորդում: Դորանից մի առանձին վնաս չի առաջանալ:

— Ես էլ այդ կարծիքի եմ, աւելացրի ես: Բայց մի բան կայ, որ սոճում եղած տերպենտինը շատ օգտաւէտ է մանկական մի քանի հիւանդութիւնների ժամանակ: Սակայն իմ կինը ինքը աւելի լաւ կերպով կը բացատրի ձեզ այդ բանը:

Կիսա դատողութիւն անելու գլուխ չունէր: Նա արհամարհանքով շուռ տեց երեսը և սենեակից դուրս եկաւ: Այդ ժամանակից մեր ընտանեկան կեանքում մէկ միջնադէպ պատահեց, որի մասին մենք աշխատում ենք երբէք խօսք չը բաց անել: Բայց և այդ ժամանակից մեր օրերը անցնում են ուրախ և անվրդով:

Պսակաճներից շատ սակաւներն են ծանօթ պարոն Ուիլեամսի քաշած տանջանքին, ուստի հեղինակը կարծում է, որ այս դէպքի նորութիւնը հետաքրքրական կը լինի բարեմիտ ընթերցողի համար:



ՏԻՎԻՆ ՈՒՒԼԵԱՄՍԸ ԵՒ ԿԱՅԾԱԿԸ

Պարոն Ուիլեամսը՝ շարունակ խօսակցութեան մէջ՝ պատմեց հետեւեալը.

Այո, պատուելիս, կայծակից վախենալը—մարդկային ամենացաւալի թուլութիւններից մէկն է: Այդ թուլութիւնը աւելի պատահում է կանանց շրջանում, երբեմնապէս գտնուում է փոքրիկ շնիկների մէջ և շատ սակաւ տղամարդերի դասում: Այդ թուլութիւնը այն պատճառով է նա մանաւանդ ատելի, որ նա մարդուն այն աստիճան ուժից զցում է, որչափ չէ կարող տկարացնել ոչ մի ուրիշ երկիւղ. և մարդ չէ կարող ոչ սառն դատել նորա մասին, ոչ էլ այդ երկիւղից չեալ կենալ, թէկուզ ամօթահարւելուց: Այն կիներ, որ քաջութեամբ կը տանէր դէի կամ մկի ներկայութիւնը, կորցնում է իւր վստահութիւնը և ջուր է կտրում կայծակի խզբզանքից: Մարդ խղճում է՝ տեսնելով կայծակից սարսափած կնոջը: Պատմեմ գլխիս եկած դէպքը:

Մի անգամ ամառը, գիւղում, մեր կալւածքում, իմ հանգիստ քնի ժամանակ լսեցի մի խեղդւած խուլ ձայն, որ ինձ զարթեցրեց:

—Այ մա՛րդ, ա՛յ մարդ, վեր կաց, կանչում էր հեկեկալով կինս իմ ականջտակին:

Սկսեցի միտքս ինձ ժողովել, տեղիցս բարձրացայ և հարցրի.

—Սիրելիս, այդ դո՞ւ ես: Ի՞նչ է պատահել: Ո՞րտեղ ես դու:

—Վերկա՛ց, պահարանը փակիր: Ամօթ չե՞ս քաշում, քեզ համար հանգիստ պառկել ես մի այնպիսի ժամանակ, երբ սկսւել է սարսափելի փոթորիկ և որոտմունք:

—Լաւ, քնած ժամանակ ինչպե՞ս կարող էի ես ամաչել: Այ կին, խելքդ որտե՞ղ է. մարդս քնած ժամանակ չէ կարող ամաչել:

Եհ, դու երբէք չես ամաչում. մթթէ, ա մարդ. դու ինքդ չը գիտե՞ս, որ միշտ այդպէս ես:

Եւ կինս սկսեց կրկին հեկեկալ խուլ ձայնով: Հեկեկանքի ձայնը սառցրեց իմ լեզուն, որ պատրաստել էր մի սուր պատասխան և ես խօսքս շուռ տուի:

—Սիրելիս, հոգեակս, շատ ցաւում եմ, որ այդպէս է եղել. հաւատացիր, որ կամաւ չեմ արել:

—Այ մա՛րդ:

—Տէր Աստուած. ի՞նչ ես ասում, հոգի ջան:

—Դու դու անկողնում պառկած ե՞ս:

—Ի հարկէ: Աբա ի՞նչ անեմ:

—Դո՛ւրս, դա՛ւրս եկ անկողնիցդ: Նթէ քո կեանքը քեզ համար թանկ չէ, գոնէ փոքր ինչ էլ է նորան պահպանիր ինձ համար, երեսաններից համար:

— Դէ, սիրելիս...

— Մի խօսիր, լսել չեմ ուզում: Դու լաւ գիտես, որ այսպիսի որոտմունքների ժամանակ մահ-ճակալից աւելի վտանգաւոր տեղ չը կայ: Բոլոր զրքերում այդպէս են զրում: Իսկ դու պառկել ես և կամաւ անձդ վտանգի ես ենթարկում, ով գիտէ ինչ դիտումով՝ միայն թէ ասածդ անես, հակառակես, հակառակես և...

— Ա՛, կի՛ն, խելքի ե՛կ. ի՛նչ է, պէտք է քեզ համար երգւեմ, որ ես մահճակալումը չեմ:

Դեռ խօսքս չէի վերջացրել, որ սաստիկ կայծակ տեսց: Տիկինս երկիւղից սարսափելի ճիչ արձակեց. որոտմունքը, գոռոցը ականջս խլացրեց:

— Տեսնում ե՞ս, այ մարդ, մեղքերից հետևանքը: Ինչպէ՞ս ես դու կարողանում այդքան փշանալ, որ այսպիսի ժամանակ երգւում ես:

— Ես չ'երգւեցի և կայծակը ամենևին երգւելուցը չէր: Միևնոյնը կը լինէր, եթէ ես ոչ մի ծպտուն էլ հանած չը լինէի, այդ ինքզ էլ լաւ գիտես, հոգեակս. գոնէ պէտք է գիտենայիր, որ երբ որ օլը, մթնոլորտը, ելեքտրականութիւնով լեցւած է...

— Հա, այդ է՞ր պակաս մնացել: Ապացուցի՛ր, ապացուցիր, ապացուցիր: Տօ, ի՛նչ ես դուրս տալիս դիտիցդ, երբ որ լաւ գիտես, որ մենք շանթարգել չ'ունենք և քո խեղճ կինը ու զաւակները գտնւում են նախախնամութեան ձեռքին: Այդ էլի ի՛նչ ես

անում: Այսպէս ժամանակ լուցկի ե՞ս վառում: Խելքդ կորցրել ե՞ս, ի՛նչ է:

— Տէր ողորմեա՛, այ չիմար կինարմատ, որտեղ է կրակը, որ աչքիդ երևում է...

— Հանգցրո՛ւ, հանգցրու այս բոպէին: Թէ դու մեզ բոլորիս զոհել ե՞ս ուզում: Դու լաւ գիտես, որ ոչ մի զան աջնպէս չէ քաշում կայծակը, ինչպէս կրակը: (Վզդ-դռռ-շախկ-շրախկ—կայծակի փայլ և գոռոց): Հը տեսա՞ր, սիրտդ հոլացա՞ւ: Հիմի տեսա՞ր քո արածը:

— Ոչինչ չեմ տեսնում: Լուցկին շատ-շատ իրան կը քաշի կայծակը. բայց հօ նա չէ՞ կայծակ ծնողը, կայծակի պատճառը: Այն էլ, որ ասում եմ կը քաշի, շատ սակաւ դէպքում. հարիւր անգամից մէկումն էլ չի պատահիլ: Եթէ լուցկի վառելովս կայծակ կարողանայի քաշել, դա կը նշանակէր, որ որսորդն էլ միլիօն հարւածներում միշտ նշան խփած կը լինէր առանց սայթաքելու: Որսորդների ընկերութիւնը, զորօրինակ...

— Ամօթ է, ա՛ մարդ, ամօթ քեզ համար: Մենք այստեղ կանգնած ենք մահի առաջ, իսկ դու մի այսպիսի խորհրդաւոր բոպէում կարողանում ե՞ս այդ տեսակ լեզուով խօսել: Եթէ դու ցանկութիւն չ'ունես... այ մարդ, լսի՛ր մէկ:

— Հը՞:

— Երեկոցեան պառկելուց առաջ աղօթք արի՛ր:

— Ես, ես... ուզում էի, բայց զբաղւած լինելով

տասներկուսը տասներեքի վերայ բազմապատկելով...

(Վզզ, դռռ, շախկ, շրախկ):

—Է՛հ, կորել ենք, անպատճառ կորել, մենք անօգնական խեղճերս: Ախր ինչպէ՞ս էիր դու կարող արհամարհել այդպիսի մի բան այս տեսակ երկիւղալի ժամանակ:

—Պառկելուց առաջ «այս տեսակ երկիւղալի ժամանակ» էր: Նրկնքում ամպի կտոր էլ չկար: Ո՞վ կը կարծէր, որ իմ մի փոքրիկ զանցառութիւնիցս կարող է այսպէս աղմուկ ու փոսնդ ծագել: Ես կարծում եմ, որ դու առհասարակ այդ տեսակ ձեւականութիւն շատ ես մեծ, չափազանցած նշանականութիւն տալիս. դու լաւ գիտես, որ դա սակաւ պատահող մի բան է: Ես աղօթելը չէի մոռանում այն օրից, որ պատահեց մեզանում մի երկրաշարժ տորանից չորս տարի առաջ:

—Իսկ միւսը, ա՛ մարդ, մոռացա՞ր. դեղնատենդ հիւանդութիւնը:

—Հոգեակս, դու միշտ օրինակ ես բերում դեղնատենդը. բայց ես համաձայն չեմ քեզ հետ: Այստեղից մինչև դեղնատենդ երեւցած տեղը այնքան հեռու է, որ հեռագիրն անգամ չէ կարելի անմիջապէս ուղարկել առանց միջանկեալ կաշարանների. այդ ինչպէ՞ս իմ մի երեկոյ աղօթք չանելը այնտեղ ազդեց այդպէս յանկարծակի: Դեռ երկրաշարժի մասին կարող եմ այդ տեսակ ենթադրութիւն թոյլ տալ, որովհետև նա մեզ մօտ պատահեց. բայց թէ

եւ ինձ պատասխանատու համարեմ ամեն մի անիծւած... (Վզզ, դռռ, շախկ-շրախկ):

—Ախ, սիրելիս, ախ, սիրելիս: Ես հաւատացած եմ, որ կայծակը մի բանի դիպաւ: Մենք էլ արեգակի լոյս չենք տեսնելու: Հը՞. ի՞նչ է. դու ուրախ կը լինես՞ մեր անհետանալուց յետոյ՝ քո սուկալի խօսքերը մոռբերել:

—Յետո՞յ: Ելի բան ունե՞ս:

—Քո ձայնը, ա՛յ, մարդ, կարծես թէ... Տէր Աստուած, միթէ՞ դու բաց վառարանի առաջն ես կանգնած:

—Այո, այդ ոճրագործութիւնով իմ զբաղւած:

—Հեռացի՛ր այս րոպէին: Դու երեւի մոքումիդ դրել ես մեզ բոլորիս կորցնելու: Միթէ՞ դու չը գիտես, որ վառարանը ամենալաւ կայծակ քաշողներին է: Հիմի էլ դու որտեղ գնացի՞ր:

—Ես այստեղ եմ, լուսամուտի մօտ:

—Օհ, Տէր ողորմեա, ի՞նչ է եղել քեզ. հօգժւել չե՞ս: Այս րոպէին այդ տեղից քաշի՛ր: Ծծկեր երեխաներն անգամ գիտեն, որ կայծակի ժամանակ վտանգաւոր է լուսամուտի մօտ կանգնելը: Ախ, սիրելիս, ես համոզւած եմ, որ գիշերս չեմ լուսացնելու... Ա՛, մա՛րդ, սիրելի՛ս:

—Ի՞նչ է:

—Այն ինչ է խշխշում:

—Ես եմ:

—Դու ի՞նչ ես անում:

— Զգեստիս ծայրն եմ որոնում:

— Դէն գցի՛ր շուտով: Ինքդ լաւ գիտես, որ բոլոր ուսումնականներն ի կարծիքով բրդէ ճոթը կայծակ քաշող է, ու հանգիստ և հանդարտ շոր ե՞ս հագնում: Օ՛հ, սիրելիս, բաւական չէ, որ բնական պատճառներից վտանգի է ենթարկւել մեր կեանքը, դու աւելի էլ մեծացնում ես վտանգը: Ի սէր Աստուծոյ մի երգիլ, մի երգիլ: Ախր միտքդ ի՞նչ է:

— Լա՛ւ, երգից ի՞նչ վտանգ կարող է լինել:

— Ա՛մա՛րդ, ես քեզ հարիւր անգամ ասել եմ, որ երգից օղը շարժւում է և այդպիսով կտրւում է ելեքտրական հոսանքը, որ... Այս ի՞նչ ես արել, ինչո՞ւ ես բացել իմ պահարանի դուռը:

— Օ՛հ, խելագար, դորանից ի՞նչ փնաս կարող է լինել:

— Ի՞նչ վնաս: Դորանից—կարող է լինել մահ: Ամեն մի տխմարն էլ, որ փոքր ինչ զիտել է, գիտէ, որ ընդմիջւող քամով կարող է կայծակ բերւել: Դէ՛, կէսն էլ չես փակել, փակիր դուռը ամուր. շուտ արա, շտապիր. թէ չէ մենք կը կորչենք: Ախ, ի՞նչ տանջանք է, որ ես կրում եմ՝ մի խելքըպակասի հետ միասին փակւած այս սենեակում: Ա՛մա՛րդ, այդ ի՞նչ ես անում:

— Ոչինչ: Զուր եմ ածում: Սենեակի օղը տաք է և խեղդող: Ուզում եմ ձեռքերս ու երեսս լւանամ:

— Դու, երևի, վերջին խելքդ էլ տանուլ ես

աւել: Եթէ ցամաք տեղում կայծակը խփի մի անգամ, ջրին կը խփի յիսուն անգամ: Թափիր ջուրը: Ախ, սիրելիս, էլ յոսս կտրեցի, թէ մենք ապրելու ենք: Ես կարծում եմ, որ... Ա՛մա՛րդ, էլի այդ ի՞նչ նոր բան է...

— Թո՛ւ, գրողը... ձեռքս կալաւ պատկերին...

— Ուրեմն, դու պատի մօտին ե՞ս: Այդպէ՞ս էլ անզգուշութիւն: Դու միթէ՞ չը գիտես, որ պատով կայծակը շատ հեշտ կ'անցնի... Հեռացի՛ր այդտեղից: Դեռ քիչ է մնացել, որ յիշոց էլ տաս: Ինչպէ՞ս ես գօրում այդպէս անբարոյական լինել մի այնպիսի ժամանակ, երբ ընտանիքդ տկներև վտանգի մէջ է: Ա՛մա՛րդ, քեզ ասել էի, որ փետրադոշակ գցել տալիս անկողնիդ տակը:

— Մոռացայ այդ բանը:

— Մոռացա՞ր: Իսկ կեանքդ որ կորչի՞: Փետրադոշակ ունենալիս, կարող էիր նորան սենեակի մէջ տեղում գետնին փռել և նորա վերան պատկել: Դէ եկ, մտի՛ր պահարանը, ինձ մօտ, դէ շուտ, քանի որ մի նոր օջին չես հանել մեր գլխին:

Ես փորձեցի մանել պահարանը. բացց սա երկու մարդ միասին տեղաւորելու անկարող էր, այն էլ փակւած դռներով և խեղդւած օդով: Փոքր ինչ համբերեցի, բացց շուտով դուրս թռայ միջիցը:

— Սիրելիս, ասաց կինս, մի բան զարձեալ պէտք է անենք քո ապահովութեան համար: Մէկ տուր ինձ վառարանի վերայ դրւած գերմանական դիրքը

և մամը. չէ', չէ', չէ', ինքդ մի վառիլ, բեր այստեղ, ես ինքս կը վառեմ: Այդ գրքումը կայծակի մասին տեղեկութիւններ կան և գրեած են խրատներ...

Գիրքը առնելը թանգ նստեց. ձեռք դիպաւ ակիհին (վազ) և միւս ղիւրաբեկ իրերին և նոքա վաղը ընկան: Կինս առաւ գիրքը և ճրագը ու ինքը փակեց պահարանում:

—Ա՛ մարդ, այն ի՞նչ ձայն է, որ լսում եմ:

—Ոչինչ, կատուն ներս թռաւ:

—Կատո՞ւն: Վա՛յ մեզ: Բռնիր նորան և լա-
ցարանում թաքցրու: Շուտ, սիրելիս՝ շուտ արա. կատունները ելեքորականութիւնով լիքն են: Ս'հ, այս գիշերւայ տանջանքներից իմ մազերը, հաւա-
տացնում եմ, սպիտակելու են:

Եթէ կնոջս հառաչները չը շարունակէին, ես դուցէ չընկնէի կատուի ետեից այնպիսի մոլթ ժա-
մանակ. բայց ի՛նչ արած: Աթոռների և ուրիշ իրերի վերայով ցատկելով, թռչկոտելով, վերջապէս բռնեցի կատուն ու կոխեցի կոմոդը, որտեղ յետոյ բանից երևաց, որ մի շորս հարկւր ղոլլարի արժողութեան զարդաիրեր են կոտրատւած:

Ինչ սթափեցրեց կնոջս ձայնը:

—Ա՛ մարդ, այս գրքի մէջ գրեած է, որ ամե-
նապահարանում գրութեան մէջ լինելու համար պէտք է անհետակի մէջ մի աթոռ դնել, որի ոտները կղզիաց-
րած լինեն վառ հաղորդիչներով և կանգնել այդ աթոռի վերայ: Ուրեմն, դու պէտք է աթոռի ոտ-

ները դնես ապակեայ բաժակների վերայ: (Վաղ, տրախիլ, շրախիլ): Ս'հ, լսում ե՞ս, տեսնում ե՞ս: Դէ շուտ արա, շուտ, քանի քեզ կայծակը չի սպանել:

Ես մի կերպ գտայ բաժակները և յարմարեցրի նրանց աթոռի ոտների տակ, ըստ որում բացի այդ չորսից՝ միւս բոլոր բաժակները ջարդեցի իմ փոր-
ձերով: Եւ սկսեցի սպասել նոր կարգադրութիւն-
ներին:

—Ա՛յ, ա՛յ, այս գերմանական գրքում ասւած է հետեւեալը¹⁾. „Waehrend eines Gewitters ent-
ferne man Metalle, wie zum B. Ringe, Uhren, Schlüssell, etc. von sich, und halte sich auch nicht an solchen Stellen auf, wo viele Metalle bei einander liegen, oder mit anderen Koerpern verbunden sind, wie an Herden, Oefen, Eisen-
gittern und dgl.“. Հիմի սա ինչպէ՞ս պէտք է հաս-
կանանք, արդեօ՞ք մեզ պէտք է մետաղներով շրջա-
պատենք, թէ նորանց մեղանից հեռացնենք:

—Ես էլ լաւ չեմ հասկանում: Այդ տեղը փոքր
ինչ մոլթ է: Իւրաքանչիւր գերմանական խորհուրդ

¹⁾ Թարգմանութիւնը սա է. որոտմունքի ժամանակ պէտք է քեզանից հեռացնես մետաղները, մատանիները, ժամացույցը, բանալիքները և այլն, և ինքդ չը մնաս այն-
պիսի տեղերում, ուրտեղ շատ մետաղներ են կուտակւած, կամ ուրիշ մարմինների հետ միացրած են, ինչպէս են հնոցները, վառարանները, երկաթեայ ցանկապատները և այլն:

փոքր ինչ մութն է լինում: Ես կարծում եմ, որ այս պարբերութիւնը կազմած է զլսաւորապէս տրական հոլովից, որին աւելացրած են՝ յամենայն դէպս՝ փոքր ինչ սեռականից և հայցականից: Ուստի ես կարծում եմ, որ այդ նախադասութիւնը ուղղւած է ասել՝ թէ պէտք է շրջապատենք մեզ մտադներով:

— Հէնց այդպէս է լինելու: Այդպէս շատ խելացի է դուրս գալիս: Դու լաւ գիտես, որ շանթարգէններ շինելու համար մետաղ էլ է գործ ածւում: Դիր գլխիդ քո այն գրակը, որ հրդեհի ժամանակ դնում ես, նա կարդին մետաղոտ է:

Ի՞նչ պէտք է անել: Պտուեցի հրդեհագրակը և դրի գլխիս: Գրակը ծանր էր և անտանելի՝ այնպիսի տաք և խեղդող օդում, որ սենեակումն էր: Առանց այլ էլ դիշերւայ զգեստն աւելի տաք էր, քան հարկաւոր էր:

— Ա՛ մարդ, այժմ յոյս ունեմ, որ զլուխդ բուրդովին ապահով դրութեան մէջ է: Բայց ասում եմ, թուրդ էլ հէնց կապես:

Այդ էլ կոտորեցի:

Այժմ, սիրելի ամուսին, շարունակում էր կինս, պէտք է մի բան գտնես ոտներդ պաշտպանելու: Ի՞նչ կայ, սիրելիս, ժանիքները (շպորները) կպցրու կոշիկիցդ:

— Լուութեամբ և անվրդով համբերութեամբ այդ էլ արի:

— Մէկ ականջ դի՛ր թէ զրբում էլի ինչ է

գրած. ¹⁾ „Das Gewitter ist sehr gefaehrlich, weil die Glocke selbst, sowie der durch das Laeuten veranlasste Luftzug und die Hoehe des Thurmer den Blitz anziehen koennten“ Միթէ՞ այնպէս չը պէտք է հասկանանք, թէ որոմունքի ժամանակ զանգակ չը խփելը վտանգաւոր է:

— Այո՛, այդպէս է երևում, եթէ միայն դա եղակի ուղղականի ընդունելութեան անցեալ ժամանակն է, իմ հաշւով հէնց այդպէս է դուրս գալիս: Ինչ թւում է, որ այդ նախադասութեան միտքը սա է. զանգակատան բարձրութեան և Luftzug-ի (օդի հոսանքի) բացակայութեան պատճառով շատ վտանգաւոր է (sehr gefaehrlich) զանգակ չը թակելը որոմունքի ժամանակ և, բացի այդ, բարձր ընդունելութիւնը...

— Ի՛նչ լաւ, բաւական է. ա՛յ մա՛րդ, ժամանակ մի կորցնիլ դատարկախօսութիւնով: Քակիր մեր մեծ զանգակը. ահա պատշգամբումն է, աջ կողմումը. դէ շուտ, սիրելիս, վտանգը անցնելու վերայ է: Սիրելիս, այժմ հաւատում եմ, որ մենք վերջապէս կարող ենք փրկւել:

Մեր ամառւայ փոքրիկ տունը շինւած է մի

¹⁾ Որոմունքը շատ վտանգաւոր է, որովհետեւ թէ զանգակը ինքը և թէ զանգահարութիւնից առաջացած օդի հոսանքը և զանգակատան բարձրութիւնը կարող են կաշկալել քաշել:

շարք բլուրներից ամենաբարձրի վերայ՝ հսկոյի գլխին։
Մեզ հարեան՝ զանաւում են մի քանի տնակներ,
որոնցից ամենամօտը երեք չորս հարիւր կանգուն
(եարդ) մեզանից հեռու է։

Երբ ես, աթոռի վերայ բարձրանալով, սկսեցի
զանգահարել եօթն ութ րոպէ շարունակ մեծ զան-
գակը, մէկ էլ տեսնեմք, մեր լուսամտի փեղկերը
դրսից յանկարծ բացեցին, մի լսալտեր մօտիկացաւ
լուսամտին և մի ձայն կոպիտ կերպով հարցրեց։

— Ի՞նչ է պատահել այստեղ։

Լուսամտի մօտ ժողոված էին տղամարդիկ,
իսկ նոցա աչքերը զարմացմամբ չռած էին իմ
զգեստի վերայ։

— Ես բաց թողի զանգակի չւանը, վրդովւած
վայր իջայ աթոռից և ասացի։

— Բարեկամներ, ոչինչ չը կայ, մենք փոքր ինչ
անհանգստացանք որոտմունքի պատճառով։ Ես աշ-
խատում էի կայծակը կանգնեցնել...

— Որոտմունք։ Կայծակ։ Ի՞նչ էք ասում պարոն
Ուրեան, հօ՛ խելագարւել չէ՞ք։ Դուքսը հրաշալի
ասողազարդ գիշեր է և ոչ մի որոտմունք չէ եղել։

Ես նայեցի լուսամտից և այնպէս զարմացած
էի, որ մի րոպէ լեզուս սառեց բերանումս։ Վերջա-
պէս՝ խելքս հաւաքելով ասացի,

— Բան չեմ հասկանում ասիւր Մենք լուսամտի
փեղկերի միջով տեսնում էինք կայծակը և լսում էինք
գոռոցը։

Լուսամտի մօտ կանգնած մարդիկը յանկարծ
մի ծիծաղ սկսեցին, մի ծիծաղ, որից նոքա կոտոր-
ւում էին, դեռին էին թափւում։ Իսկ երկուսը
կողքի ծակոցից մինչև անգամ մեռան։ Գնդանի
մնացածներից մէկը նկատեց։

— Ափսոս, որ ձեր խելքին մէկ չեկաւ, որ փեղ-
կերը բանայիք և նայէիք այն բարձր բլրի զլուխը։
Այն ինչ որ դուք լսել էք— նա թնդանօթների ձայն
է եղել։ Իսկ ինչ որ տեսել էք— նորա կրակը։ Բանն
այն է, որ գիշերւայ կէսին հեռագիր եկաւ, որ Հար-
ֆիլդը նախագահ է ընտրւած և ահա ինչո՞ւ թնդա-
նօթներ են դատարկւում։

Պատմողը, այսինքն պարոն Ուրեանը, վեր-
ջացրեց իւր խօսքը այսպէս։

— Այո՛, պարոն Տուէն, ինչպէս ասացի, կայծա-
կից պաշտպանւելու կանոնները այնքան կատարեալ
են և բաղմամբիւ, որ ես չեմ կարողանում հասկա-
նալ, թէ ինչպէս են դեռ գտնւում այնպիսի խելառ-
ներ, որ իրանց սպանել են տալիս կայծակից։

Այս խօսքերից չետոյ ճանապարհորակիցս վեր
առաւ իւր ուղեւորայրը ու հովանեակը և դուրս եկաւ
երկաթուղու կառքից, որովհետեւ հասանք նորա
քաղաքի կայարանին։

ԻՄ ԱՌԱՋԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Ես տասներեք տարեկան հասակումս մի սրամիտ տղայ էի և մինչև անգամ աչքի ընկնող սրամիտ. գոնէ ես այդ կարծիքը ունէի իմ մասին:

Իմ պտտանեկութեան այդ վաղ ժամանակում ես սիրտ արի առաջին տպագրութեան տալ իմ գրեածքը, որ բոլորովին անսպասելի կերպով մեծ աղմուկ գցեց մեր հասարակութեան շրջանում: Իմ յօդածիկով, կարելի է ասել, պարծենում էր մեր հասարակութիւնը, ինչպէս և ես ինքս:

Ես, ինչպէս ասում են, լրագրի «չարածին», դարձաւ այն է մի քաջարի ու փառասէր չարածին:

Հօրեղբայրս հրատարակում էր «Հաննիբալեան շարաթաթերթ», անունով մի լրագիր, որ արժէր տարին երկու դոլլար, նշանակել էր վճարը կանխիկ, ունէր հինգ հարիւր բաժանորդ, որոնք լրագրի վճարը փոխարինում էին վառելափայտով, կաղամբով և փչացած շաղգամով:

Եւ ահա ամառւայ մի գեղեցիկ օր՝ հօրեղբայրս, ստիպւած լինելով մի շաբաթով հեռանալ քաղաքից, հարցրեց ինձ՝ կարող եմ ևս արդեօք նորա բացա-

կայութեան միջոցին՝ յանձն առնել նորա լրագրի խմբագրութիւնը:

Ինչ ասել կ'ուզի: Ո՞վ չի ցանկանալ իւր ոյժերը փորձել: Ի հարկէ ամենամեծ պատրաստակա-նութեամբ ընդունեցի: Եւ ահա ինչ բանից ես սկսեցի:

Մի պարոն Խ*, այդ ժամանակ խմբագիր էր մի ուրիշ լրագրի, որ հօրեղբորս լրագրի հակառակորդն էր ներկայանում: Պարոն Խ*-ը հէնց այդ ժամանակ-ները խաբւած էր մի կնոջից, որին նա սիրել էր: Խ.-ի բարեկամը մի երեկոյ գալիս է նորա մօտ, նո-րան տանը չէ գտնում, իսկ մահճակալի վերայ տես-նում է Խ.-ի ձեռքով գրած բաց նամակ, որով յայտ-նում է, որ նա անկարող է այլ ևս իւր անջաջող կեանքը շարունակել և վճռել է մեռնել՝ խեղդելով իրան Արջագէտում: Բարեկամը շտապում է իսկոյն դէպի գետը և տեսնում է, որ Խ.-ը ջրի հոնով բարձ-րանում է դէպի ափը: Դուրս է գալիս, որ նա միտքը փոխել է... Քաղաքումը մի քանի օր հէնց այդ անցքի մասին էր բոլորի խօսքը: Բաց Խ.-ը չը գիտէր թէ ինքը խօսակցութեան առարկայ էր:

Այս անցքը ինձ թւեց շատ իւղալի նիւթ մի սուր յօդածիկի համար: Ես նորանից, թէև վատ, բաց մի երկաշն պատմածք շինեցի, որը, ազդեցու-թիւն գործելու նպատակով, ճոխացրի անճոռնի նկար-ներով, որոնք դանակով քանդակւած էին փայտի վե-րայ: Այդ նկարներից մէկը ներկայացնում էր Խ.-ին

այն րուպէին, երբ նա մտնում է եղել գետը՝ շապկանց և լապտերը ձեռին, գաւազանով ստուգելով ջրի խորութիւնը: Այդ բանը ինձ շատ զւարճալի թւեց և ի հարկէ իմ գլուխը չէր կարող հաշի առնել այդպիսի պարսաւագրի բարոյական նշանակութիւնը:

Բոլորովին բաւական մնալով իմ սրամտութեան արդիւնքից՝ ես որոնում էի իմ յաղթութիւնների համար ուրիշ առարկաներ, երբ յանկարծ մի լաւ բան եկաւ մտքիս, այն է, որ փորձեմ գրել մի ծաղրական ոտանաւոր, որով մի լաւ կձեմ գիւղական թերթի հրատարակչին, մեղադրելով նորան մի որ և է չարած խարդախութեան համար և յետոյ տեսնեմ — թէ նա ինչպէս է վեր ու վայր տալիս և կատաղում:

Ես մտադրութիւնս իրագործեցի, նմանեցնելով ոտանաւորս յայտնի մի բանաստեղծութեան և, ինչ թաղցնեմ, «նմանողութիւնը» շատ անցաջող դուրս եկաւ:

Դորանից յետոյ ես ամենակատաղի ակնարկներով խաչտառակեցի մեր քաղաքացիներից երկու անւանի մարդու, որոնք՝ իսկն ասած՝ մերկացնելու արժանի ոչինչ չէին արած, բայց ես մտքումս գրել էի հօբեղբօրս լրագիրը՝ որչափ կարելի է՝ կենդանի դարձնելու:

Այնուհետեւ ես մի թեթեւ կոթեցի մեր քաղաքը նոր եկած մի շքասէր ձանապարհորդի, որ կանանց շրջանում մեծ անուէն ունէր և սրտեր էր գրաւում: Դա մի անվերջ ժպտացող իմաստաւն էր, զիզի-

պիզի հազնւող և անսահման իրանով պարծեցող: Նա իւր արած յաղթութիւնների պատուին և չիշտակին յօրինում էր տենդոտ ոտանաւորներ, որ բերում էր մեր թերթում տպագրելու: Իմ խմբագրութեան միջոցին՝ նա բերաւ մի ոտանաւոր այս վերնագրով «Մարիամը Հ-ում», որ նշանակում էր՝ Մարիամը Հաննիբալեան թերթում: Սրբագրութեան ժամանակ կարդալով այդ ոտանաւորը՝ ես տեսայ, որ դա ամենախաչտառակ զատարկութեան մի նմուշ է, որ ի հարկէ պէտք է ամենեւին չը տպագրէի. բայց ես նորան հրատարակեցի, սուելացնելով հետեւեալ կծու ծանօթութիւնը:

«Մեք տպագրում ենք այս անմիտ ոտանաւորը վերջին անգամը. բայց յայտնում ենք նորա հեղինակ պարոն Գ-ին, որ միւս անգամ մենք մեզ այս փորձութեան մէջ չենք գծիլ և խորհուրդ ենք տալիս, որ նա միւս անգամ, երբ ցանկանալու լինի գործ ունենալ իւր բարեկամուհիների հետ Հ-ում, ընտրի իւր համար ուրիշ միջնորդ և ոչ թէ մեր լրագրի համարները»:

Համարը դուրս եկաւ: Ես երբէք չէի երեւակայել, որ լրագրական մի այդ տեսակ չնչին բան կարող էր մի այդ տեսակ ուշադրութիւն գրաւող լինել: Մեր լրագիր պահանջողները յանկարծ բազմացան և այնպէս մեծ թւով, որ մինչև այդ ժամանակը լսւած չէր:

Բոլոր քաղաքը տակնուվերայ եղաւ: Վաղ առաւօտը պ. Խ-ը մտաւ խմբագրատունը՝ ձեռքին բըռ-

նաժ Երկփողանի հրացանը: Երբ նա ինձ տեսաւ և համոզեց, որ նորան վիրաւորողը ինձ նման մի երեխայ է, միայն ականջներս բռնեց, քաշեց և հեռացաւ. բայց մի և նոյն երեկոյեան, ինչպէս իմացանք, նա բնակարանի վճարը տալիս է ու հեռանում առ միշտ մեր քաղաքից: Ճանապարհորդը, որ իւր մասնագիտութիւնով մի դերձակ էր, եկաւ իւր մկրատով և արգնուելով. բայց նոյնպէս նայեց արհամարհանքով վերաս և իսկոյն հեռացաւ մեր քաղաքից: Միւս երկու անւանի քաղաքացիները եկել էին իմ դէմ դատ բանալու, բայց տեսնելով իմ չնչին մի բան լինելս՝ դուրս փախան կատաղած կերպով:—Միւս օրը՝ գիւղական թերթի խմբագիրը ներս մտաւ և սկսեց անհաշիւ աղաղակել ու բարկանալ, արիւնով վրէժ պահանջելով, սակայն վերջացրեց նորանով, որ բարեսիրտ կերպով ինձ ներեց և մինչև անգամ ինձ հրաւիրեց մերձակայ դեղատունը, որ իսպառ ջնջենք թշնամական զգացմունքը՝ դարդակելով մի-մի բաժակ «ճիճու սպանող» դեղից, ինչպէս նա հանաքով ասաց ինձ՝ բաժակը բաժակիս չիկացնելով:

Հօրեղբայրս իւր բացակայութիւնից դառնալով՝ շատ բարկացաւ վերաս և ի հարկէ՝ ի զուր, որովհետեւ ես լրագրին զարկ էի տւել, նորա մէջ կենդանութիւն փչելով և մի և նոյն ժամանակ նորան չէի ենթարկել կատաղի մեղադրեալների արիւնարբու հարաւածներին...

Բայց երբ հօրեղբայրս նայեց հտշւեմատեանին՝

բարկութիւնը փոխեց զթութեան և ժպիտի: Նա տեսաւ, որ ես աւելացրել եմ բաժանորդների թիւը երեսուն և երեքով, որոնք արդէն նաղդ կերպով հատուցել էին բաժանորդագինը ամենայն տեսակի տնային պաշարներով և ընդեղէններով, զորօրինակ, փայտով, կաղամբով, բակլով և չը ծախւող շոգամով, և այս բոլորը այնպիսի մեծ քանակութեամբ, որ կարգին ընտանիք ունեցողին անգամ՝ երկու տարի կարող էր բաւել:

ԻՄ ԺԱՄԱՅՈՅՑԻ ԱՐԿԱԾՔՆԵՐԸ

Ես ունէի մի հրաշալի ժամացոյց, որ ամբողջ տարի ու կէս ժամանակ բանում էր բոլորովին կանոնաւոր, ոչ յետ էր մնում, ոչ առաջ էր գնում, ոչ մի խանգարումներ չունէր և երբէք էլ չէր կանգնում: Ես արդէն սկսում էի այն համոզմունքին գալ, որ իմ ժամացոյցը անսխալական է իւր ցուցմունքներում, իսկ նորա կազմածքը և ներքին աշխարհը մշտնջենական է:

Բայց չը գիտեմ ինչպէս եղաւ՝ մի անգամ գիշերը մոռացայ ժամացոյցս լարելու և նա կանգնեց: Այս դէպքի մասին ես շատ ցաւեցի, տեսնելով այդտեղ ապագայ դժբաղդութեան մի նախաբան, մի չարագուշակ նշան:

Ես սակայն ինձ քաջալերեցի և դիմեցի ժամագործին, որ նա կարգի բերի բոլորը: Ժամագործը ձեռքն առաւ իմ ժամացոյցը, և բաց արաւ ներսը և սկսեց մանրամասն զննութիւն, որից յետոյ վճռական կերպով յայտնեց՝ «ժամացոյցը չորս րոպէ յետ է մնում, պէտք է նորա խաղը աւելացնել»:

Ես կամեցայ նորա ձեռքը բռնել, յետ պահել,

փորձեցի հասկացնել նորան, որ ժամացոյցի խաղը բոլորովին ճիշդ է, բայց աւաղ, ի զուր: Ախմախը մի բերան հա պնդում էր, որ ժամացոյցը յետ է մնում, պէտք է ղեկը փոքր ինչ ծռել և էլ ոչինչ չէր ուզում լսել: Մինչդեռ ես վրդովմունքից և բարկութիւնից պար էի գալիս կանգնած տեղումս՝ չարագործը սառնասիրտ և կոպիտ կերպով իրագործեց իւր խայտառակ մտադրութիւնը:

Եւ ի՞նչ դուրս եկաւ: Ժամացոյցս սկսեց վազել: Նա վազում էր անդադար՝ օր օրի վերայ՝ աւելի ողբերկելով: Մի շաբաթից յետոյ նա արդէն հասաւ մի հիւանդոտ տենդային արագութեան և նորա զարկը բարձրացաւ մինչև հարիւր յիսունի սուէրում: Երկրորդ ամսի վերջում նա մեր քաղաքի բոլոր ժամացոյցներից առաջ ընկաւ և նորա ցոյց տաւ ժամանակը (եթէ հաշուենք բոլոր աւելորդ անցած ժամերը) օրացոյցի ցուցմունքից տասներեք օր աւելի առաջ անցաւ: Ժամացոյցս նոյեմբեր ամիսն էր մտել՝ փոթորիկների և ձիւնի եղանակները, մինչդեռ դրսումը՝ հոկտեմբերի տերևները դեռ ծառերի վերայ թփթփում էին: Հետեւելով ժամացոյցիս ցուցմունքին՝ ես վաղ վճարեցի բնակարանիս փողը, պայմանաժամից առաջ տւի հաշիւներս և կատարեցի ուրիշ պարտաւորութիւններս այնպէս տնաքանդ կերպով, որ հազիւ ազատեցի կատարեալ սնանկութիւնից:

Ձէ, տեսայ բանս շատ է վատանում. ես վճռեցի

նիմեյու մի ուրիշ ժամագործի: Նա հարցրեց ինձ, արդեօք երբ և իցէ տւել եմ ժամացոյցս ուղղելու: Ես բացասական պատասխան տւի, հաւատացնելով նորան, որ ժամացոյցս ոչ մի պակասութիւն երբէք չի ունեցել:

Նա նայեց ժամացոյցիս մի դիւական զգւելի շարախնդացութեամբ, արագ բացեց ներսը և յետոյ՝ իւր աչքին դնելով խոշորացոյցը՝ սկսեց գննել ժամացոյցի կազմութիւնը: Զննութիւնից յետոյ՝ ժամագործը յայտնեց, որ հարկաւոր է ժամացոյցը մաքրել, օծել և նորա զեկի դիրքը փոխել: «Մի շաբաթից յետոյ, ասաց նա, պատրաստ կը լինի»:

Այս գործողութիւնից, այսինքն, մաքրելուց, օծելուց և զեկը տեղափոխելուց յետոյ, դժբաղդ ժամացոյցս սկսեց այնպէս յետ մնալ, որ նորա յուսակոտուր չկէշխտոցը յիշեցնում էր թաղումի զանգահարութիւնը: Ժամացոյցիս շնորհքից՝ ես բաց էի թողնում հարկաւոր գնացքները, ուշանում էի գործքիս վերաբերեալ բոլոր այցելութիւններին և վերջապէս բաց էի թողնում մինչև անգամ իմ ճաշերը: Ժամացոյցս մի անգամ կարևոր պարտամուրհակիս օրը գողացաւ և ես սաստիկ տուժեցի: Աստիճանաբար ես յետ էի գնում դէպի երեկւայ օրը, յետոյ անցեալ օրը, և վերջապէս մի շաբաթ յետ: Ես սկսեցի վախենալ, որ մի գուցէ աւելի ևս յետ գնամ և անցած ամիսը ընկնեմ: Բոլոր աշխարհը սկսեց մթնել աչքումս: Այդպէս յետ գնալով ակսր ուր պէտք է հաս-

նէի: Ես արդէն նկատում էի, որ իմ մէջ մի ձգտում է սկսում երեւալ դէպի մեր թանգարանում դրւած մուսիան և պահանջ է զգացւում նորա հետ զրոյցի մտնել ընթացիկ ասեկոսէների մասին:

Ես նորից դնացի ժամագործի մօտ: Իմ ներկայութեամբ նա նորան քանդեց՝ մանր մասների վերածելով, որից յետոյ ասաց, որ պէքը ձգւել է և որ նա յանձն է առնում երեք օրում ուղղել: Այս անգամայ կարկատանից ժամացոյցս սկսեց օրւայ հաշիւը ուղիղ ցոյց տալ մօտաւորապէս. բայց ահա ինչ օտարոտի սովորութիւններով: Օրւայ կէսը նա շարժւում էր աշխուժով, անգթաբար արագ և բարձրացնում էր մի այնպիսի հաջոց, ոռնոց, շւոոց, փռնչոց և փռշտոց, որ նորա դժոխային աղմուկից մտքերս խռնւում էին իմ գլխումը, էլ չը խօսած այն բանի մասին, որ այդ արշաւանքի ուժգնութեան շնորհիւ՝ քաղաքի ամենաեռանդուն ժամացոյցներն անգամ չէին կարողանում դիմանալ և յետ էին մեռում: Իսկ օրւայ երկրորդ կէսից նա սկսում էր դանդաղ շարժւել և ապուշանալ, մինչև որ դարձեալ գալիս էր և հաւասարւում միւս ժամացոյցներին իւր հաշիւներով:

Այդպիսով, վերջ ի վերջոյ, մի ամբողջ օրը լրանալուց յետոյ՝ ժամացոյցս հասնում էր մրցանակի սիւնին՝ բոլորովին ճիշդ պայմանաժամին, կարծես թէ մոռանալով իւր բոլոր շեղումները:

Նա ցոյց էր տալիս միջին ժամանակը ուղիղ և

ռչով չէր կարող յանդիմանել, որ նա աւելի կամ պակաս է բան արել: Բայց միջին ժամանակի ուղիղ ցոյց տալը կազմում է մի ժամացոյցից պահանջող առաքինութիւններից ամենափոքրը:

Ես տարի ժամացոյցս մի ուրիշ ժամագործի մօտ: Նա ասաց, որ գգրոցը փչացած է: Ես ուրախացայ, իմանալով, որ աւելի մեծ վտանգ չէ վերահասել իմ ժամացոյցին: Իսկն ասած, ես հասկացողութիւն անգամ չ'ունէի թէ ի՞նչ բան է ժամացոյցի «գգրոցը», բայց չէի ուզում տգէտ երևալ անծանօթի առաջ: Ժամագործը ուղղեց կոճակը. բայց ժամացոյցը՝ որչափ դորանից լաւացաւ, այնքան էլ վատացաւ, որովհետեւ փոքր ինչ գնում էր՝ փոքր ինչ կանգնում, յետոյ դարձեալ գնում և կանգնում և այլ, ինքնահաճ կերպով կարգադրելով իւր գնալու և կանգնելու միջոցները: Ամեն անգամ էլ՝ ճանապարհ ընկնելուց՝ աղմուկով յետ էր տալիս, ինչպէս մի հրացան: Ստիպւած՝ մի քանի օր ես բամբակի կրծքակալ էի դնում բաճկոնակիս տակը... բայց վերջապէս տարի իմ չարաբաղդ ժամացոյցը մի ուրիշ ժամագործի մօտ:

Սա քանդեց ժամացոյցս: Երկայն ժամանակ նա խոշորացոյցով քննում էր իւրաքանչիւր մասնիկը և վերջումը չայտնեց, որ պէտք է մազը փոխել: Յետոյ նորից հաւաքեց բոլորը և բանի գծեց: Այժմ ժամացոյցը սկսեց յաջող առաջ գնալ. միայն ամեն անգամ՝ երբ հասնում էր տասն ժամին առանց տասն

րոպէի, սլաքները միմիանց գրկում էին, ինչպէս մրկրատի թաթերը, և այդ կէտից շարունակում էին իրանց զբօսանքը միասին: Աշխարհիս ամենափորձառու ծերունին անգամ չէր կարող այդպէս ժամացոյցով որոշել ժամանակը, ուստի ես դարձեալ տարի վարպետի մօտ:

Նոր ժամագործը ինձ ասաց, որ ապակին ճնշում է և սլաքը թուլացել է, ուստի պէտք է այդ մասերը փոխեն: Նա իսկապէս մեծ ճշտութեամբ կատարեց, ինչ հարկաւոր էր: Եւ ժամացոյցս յիրաւի բաւականին առողջացաւ, միայն մի արատաւորութիւն ունենալով: Անվրդով և բարեխիղճ կերպով ութ ժամ շարունակ շարժւելուց յետոյ, նորա ներքին համակարգութիւնը խանգարւում էր, մեքենան սկսում էր բզզալ մեղրածանձի նման, ըստ որում սլաքները սկսում էին արագընթաց պտրտել՝ մէկը միւսի ետեւից՝ այնպիսի ուժգնութեամբ, որ նոցա անհատականութիւնը չքանում էր արտաքին տեսքից և նոքա երևում էին ժամացոյցի երեսին, իբրեւ ոստայնի թելեր:

Ժամացոյցը այդպիսի դէպքերում մի վեց-եօթ րոպէում անում էր քսանչորս ժամւայ գործ և յետոյ կանգ էր առնում ուժգին հարւածով: Տխուր սրտով ես գնացի դարձեալ մի ժամագործի մօտ և վճռեցի, որ այս անգամ արդէն մանրամասն հետեւեմ ժամացոյցիս վերայ կատարուող փորձերին և կէտ առ կէտ հարց ու փորձ անեմ բոլորի մասին, որովհետեւ,

ինչպէս տեսնում էի, ինձ սպառնացող վտանգը շատ լուրջ կերպարանք էր սկսում ստանալ:

Առաջ ժամացոյցս արժէր երկու հազար դոլլար, իսկ զբաղւելով նորան ուղղելու և կարկատելու գործով՝ ես կարծեմ ծախք էի արել արդէն երկու երեք հազար դոլլար:

Մինչդեռ ճնշած այս խորհրդածութիւններից՝ սպասում էի վարպետի վճռին, սկսեցի նկատել, որ ժամագործը ինձ ծանօթ է երևում: Միթէ՞ սա իմ վաղեմի ծանօթ՝ շողենաւի մեքենավարն է, որ ամենեւին հմուտ մասնագէտի անուն չունէր: Ես դիտում էի, աչքիս չէի հաւատում: Նա մանրամասնաբար զննեց ժամացոյցի կազմութիւնը, ինչպէս արել էին և նախորդ վարպետները և յետոյ յայտնեց իւր որոշումը՝ նոյն անպայման անձնապատանութեամբ:

— Ձեր ժամացոյցը, ասաց նա, չափազանց շատ շոգի է արտաբերում. պէտք է նախապահ լեզակը փակւի...

Համբերութիւնս այդտեղ հատաւ. բարկացայ և այնպէս սաստիկ վերան յարձակեցի, որ գլուխը իսպառ ջարդեցի, իրան մեռցրի և թաղեցի թշառականին իմ հաշւով:

Իմ հանգուցեալ հօրեղբայր Ուիլեամը (Աստուած հոգին լուսաւորի) յաճախ ասում էր, որ լաւ ձին մինչև այն ժամանակն է լաւ ձի, քանի տնից

չէ փախել և որ լաւ ժամացոյցն էլ՝ մինչև այն ժամանակն է լաւ, քանի չէ ընկել կարկատողների ձեռքը: Նա առհասարակ զարմանում է, թէ ի՞նչ տեսակ են կարողանում աշխարհումս ապրուստ ձարել բոլոր անյաջող պրինադործները, զինագործները, կոշկակարները, մեքենագործները զարբիները, և այլն և այլն: Եւ այդ բանի վերաբերմամբ՝ ոչով չէր կարողանում նորան մի կարգին պատասխան տալ:

ՓՐԿԱՐԱՐ ԶԱՅՆԸ

I

Աւելի քան հազար տարի սորանից առաջ՝ Գերմանիայում մի շատ փոքրիկ թագաւորութիւն կար, որ միայն մի գաւառակ տեղ էր բռնել և այն- քան աննշան էր, որ կարծես մի խաղալիք, մի դե- ղեցիկ խաղալիք թագաւորութիւն էր:

Նա շատ հեռու էր այն ժամանակներում ամենուրեք տիրող պատերազմական ոգուց, զանազան հակառակութիւններից, մրցումներից և փոթորիկ- ներից: Ներքին կեանքը անցնում էր խաղաղ և հանդարտ. ժողովուրդը երկիւղած և պարզասիրտ էր: Թագաւորութիւնը վայելում էր բարերար խա- ղաղութեան խոր քունը և անվրդով հանգստութեան երջանկութիւնը: Այնտեղ չը կար ո՛չ մարդկային չա- րութիւն և ո՛չ սնապարծութիւն, ուստի այդ օրհն- ւած երկրում՝ չը կար ո՛չ թշնամութիւն և ո՛չ տա- ւապանք:

Պատահեց, որ ծեր թագաւորը մեռաւ և զահ նստեց նորա մանուկ որդին՝ Հուբերտը: Սորան շատ սիրում էր ժողովուրդը և տեսնելով մանուկի բարու-

թիւնը, ազնւութիւնը և սրբութիւնը, ոգեւորում էր և նորան կուռքի տեղ էր պաշտում:

Մանուկ թագաւորի ծնունդի միջոցին աստղա- գէտները ուսումնասիրել էին աստղերի յայտնու- թիւնները և կարդացել էին երկնային լուսաճաճանչ մատեանի մէջ հետեւեալ պատգամատողերը.

«Հուբերտի տաճն և չորս տարեկան հասակում տեղի կունենայ մի նշանաւոր դէպք: Այն արարածը, որի ձայնը ամենից հաճելի կը թւայ Հուբերտին, կը փրկի թագաւորի կեանքը: Եւ որքան ժամանակ էր թէ թագաւորը և թէ նորա ժողովուրդը կը յարգեն այդ արարածի ցեղը այս բարի ծառայու- թեան համար, այնքան ժամանակ էլ այս թագա- ւորական տունը ժառանգներ կունենայ, իսկ ժողո- վուրդը չի տեսնիլ ո՛չ պատերազմ, ո՛չ ժանտախտ և ո՛չ աղքատութիւն: Բայց պէտք է զգուշանալ սխալ ընտրութիւնից»:

Երբ մանուկ թագաւորի տաճներեք տարին լրացաւ, պետական զուշակաբանները միայն մի հոգսի անձնատուր եղան, այն է՝ թէ ինչպէս հասկանան մարգարէութեան վերջին խօսքերը: Որովհետեւ առաջին նախադասութիւններից այնպէս էր երեւում, որ փրկարար արարածը ինքն է իբրան ընտրելու հար- կաւոր ժամանակը. իսկ վերջնական նախադասու- թիւնից զուրա էր դալիս, որ թագաւորն է նախա- պէս ընտրութիւն անելու և յայտնելու իւր համար ամենահաւանելի երգչի անունը և որ եթէ ընտրու-

Թիւնը խմատուն կերպով արւած լինի, երգիչ կեն-
դանին կը փրկի նորա կեանքը, տունը և ժողովուրդը.
իսկ եթէ սխալ կատարւած լինի—սպառնում է մեծ
փառնոց:

Տարւայ վերջումը զանազան կարծիքների թիւը
մնաց միւսնոյնը, ինչպէս որ սկզբումն էր: Բայց խո-
հական և պարզասիրտ անձերի մեծամասնութիւնը
այն համոզումը ունէր, որ պէտք է ընտրութիւնը
վաղօրոք կատարել և որչափ վաղ՝ այնքան լաւ:
Վասնորոք հրաման էր արձակւած բոլոր հպատակ-
ներին, որ ով նոցանից որ և է երգիչ Թռչուններ
ունի, նորան ներկայացնի պալատի մեծ դահլիճը
նոր տարւայ առաջին օրը՝ վաղ առաւօտեան:

Հրամանը կատարեց: Երբ ամեն բան պատ-
րաստ էր, Թագաւորը հանդիսաւոր կերպով դուրս
եկաւ շրջապատւած պետական անձերով, որոնք հա-
գած էին ճոխ ու շքեղ պալատական զգեստներ:
Թագաւորը բազմեց ոսկեայ գահի վերայ և պատ-
րաստուում էր իւր կարծիքը յայտնել. բայց յանկարծ
նա բացականչեց.

— Բոլոր Թռչունները, սակայն, միասին են
երգում: Աղմուկը անտանելի է: Այս խառնաշփոթի
մէջ ոչ ոք չէ կարող ընտրութիւն անել: Դուրս
տարէ՛ք բոլորին և յետոյ մէկ-մէկ ներս բերէ՛ք:

Այդպէս էլ արին:

Թռչունները մէկը միւսի յետեւից փաշփաշում
և ղիւթում էին Թագաւորի լսելիքը և դուրս տար-

ւում հետեւեալներին տեղ տալու համար: Քանկա-
զին ըստէները անցնում էին աննկատելի կերպով:
Այդքան հրաշալի երգիչների բազմութեան մէջ Թա-
գաւորը զժաւրանում էր ընտրութիւն անելու: Բայց
զժաւրութիւնը աւելի մեծանում էր սխալելու եր-
կիւղից, որ ունէր Թագաւորը իւր մէջ: Երկիւղը այն-
պէս ճնշել էր նորա զատողութիւնը, որ նա ինքը
իւր ականջների վկայութեան չէր կարողանում հա-
ւատ ընծայել: Թագաւորը ջղախն էր դառնում կա-
մաց կամաց և նորա երեսը ցոյց էր տալիս մեծ
վրդովմունք: Այդ բանը նկատեցին նորա նախարար-
ները և իրանց աչքերը չէին կտրում Թագաւորից:
Նախարարները միմեանց մէջ խօսում էին.

— Թագաւորը կորցրել է ինքնախտահութիւնը:
Հանգիստ ուշիմութիւնը նորանից փախել է: Ով գիտէ,
յանկարծ կը սխալւի—այն ժամանակ և ինքը՝ և իւր
տունը և ժողովուրդը փառնոքի կ'ենթարկեն:

Գրեթէ մի ժամ Թագաւորը լուռ նստած էր և
յանկարծ յայտնեց.

— Յետ բերէք կանեփուկ Թռչնիկին:

Կանեփուկը երգեց իւր ուրախ տաղը: Երգելու
միջոցին Թագաւորը արդէն քիչ էր մնացել, որ բարձ-
րացնի զաւաղանը, իբրեւ նշան իւր ընտրութեան,
բայց կանգ առաւ և ասաց.

— Զէ, մի լաւ համեմատենք, յետոյ Բե-
րէ՛ք այստեղ և տորդիկին: Թո՛ղ միաժամանակ
երգեն:

Տորդիկին բերին: Երկու ձայնաւորները հնչեցրին միասին իրանց հրաշալի երգերը: Թագաւորը առաջ տատանոււմ էր. բայց շուտով սկսեց նորա կարծիքը կազմակերպել հաստատ կերպով և ամեն մարդ կարող էր այդ բանը կարդալ նորա երեսին: Մեծախորհուրդը նախարարների սրտերը լքեցին յուսով, արիւնը սկսեց ուրախ հոսել նոցա երակներում: Եւ թագաւորի գաւազանը արդէն կամաց-կամաց բարձրանալու վերայ էր, երբ...

Յանկարծ պատահեց մի խանգարիչ հանգամանք: Հէնց դռան առաջից լսեց մի էշի ձայն:

— Ահա-ոհ... քիւր... ահա-ոհ... ահա-ոհ...

Բոլորեքեան վրդովեցին, կոտրեցին և միևնոյն ժամանակը իրանք նեղացան իրանց վրդովմունքից:

Դորանից յետոյ իսկոյն ներս վազեց թեթևաշարժ, խելօք և չքնադագեղ մի գիւղացի աղջիկ ինն տարեկանաչափ, որի թուլս աչքերը փայլելում էին երեսնայական ոգեւորութիւնով: Բայց երբ նա տեսաւ արքայական ատենանի նիստը և իշխանների տրտում դէմքերը, նա սառեց, գլուխը քաշ գծեց և աչքերին տարաւ իւր պատռոտած աղքատիկ գոգնոցի ծայրը: Ոչ ոք աղջկան չ'ողջունեց, ոչ ոք նորան չ'խղճաց: Այն ժամանակ նա արտասուքի միջով և գոգնոցի տակից նայեց երկիւղով և առոյց.

— Մեծ թագաւոր, ինչպիսիք եմ, ներե՛ս իմ համարձակութիւնս, ես ոչ մի վատութիւն չեմ արել: Ես հայր-մայր չունեմ. բայց դոցա փոխարէն ունեմ

մի այծ և մի էշ, որոնք միայն ինձ են պատկանում: Այժա ինձ տալիս է համեղ կաթ. իսկ իմ սիրելի էշը... երբ լսում եմ նորա ձայնը՝ ինձ թւում է, որ աւելի քաղցր երաժշտութիւն չէ կարող լինել: Ուստի, երբ պալատական ծաղրածուդ յայտնեց, որ կենդանիների մէջից ամենալաւ երգիչը կարող է փրկել թագաւորին և մեր ժողովրդին, ես էլ վճռեցի իմ էշին բերել այստեղ...

Ժողովականները սաստիկ ծիծաղ և կոպիտ քրքրիչ բարձրացրին: Երեխան լաց եղաւ և դուրս վազեց՝ չը վերջացրած իւր խօսքը: Առաջին նախարարը առանձին հրաման արձակեց, որ աղջկան նորա չարաբաղդ էշի հետ միասին պալատի շրջակայքից բռնէ, արգելելով նորան, որ երբ և իցէ նա ոտք կոխի այդ տեղերքը:

Յետոյ կրկին վերանորոգեց թռչունների փորձը: Երկու փոյգեանները երգում էին հիանալի. բայց թագաւորի ձեռքում զաւազանը մնում էր անշարժ: Ներկայ եղողների սրտում յոյսը կամաց կամաց նւազում էր:

Անցաւ մի ժամ, անցաւ երկրորդը, իսկ թագաւորը վերջնական վճռի չէր դալիս: Օրը արդէն մթնում էր և պալատի շուրջը սպասող ամբոխը դժուար էր անցայտութիւնից և երկիւղից: Մութն ընկաւ, սուէրները խոռացան:

Թագաւորը և նորա պալատականները մթութեան մէջ չէին կարողանում միմեանց ճանաչել: Բայց

ոչ ոք չէր վստահանում լուսթիւնը խանգարել, ոչ ոք կրակ չէր պահանջում: Հանդիսաւոր փորձը վերջացած էր և վերջացած անցած: Այդ պատճառով բոլորն էլ ուրախ էին, որ մթութեան մէջ նոցա դէմքերը չեն երևում և նոցա սրտին տիրող տրամու-
թիւնը աչքի չի ընկնում:

Վերջապէս—ուխո՛յ: Պալատական գաւիթներէ հեռու մի ծայրից հնչեց սոխակի հրաշափառ, զիւ և զիցանոյշ զեղգեղանքը, զիշերւայ խօսնակի ձայնը:

—Վճռւած է, բացականչեց թագաւորը, խփեցէք զանդակները և յայտնեցէ՛ք իմ ժողովրդին, որ ընտրութիւնը կատարւած է և այն էլ անխալ: Աս, իմ առնը և ժողովուրդը փրկւած ենք: Այժմ և յաւիտեան: Սոխակը իմ բոլոր թագաւորութեան մէջ պէտք է մեծ յարգանք վայելի: Բացի այդ՝ յայտնեցէ՛ք բոլոր հպատակներին, որ ով նեղացնի կամ վնասի սոխակներին՝ կեանքից կը զրկուի: Այսպէս է հրամայում թագաւորը:

Փոքրիկ աշխարհը հիացմունքից կարծես հարփեց: Պալատում և քաղաքումը կազմեց ամբողջ զիշերը ճրագալոյց զւարճալի ճրագներէ: Ամբոսը պարում էր, խմում էր և անդադար հնչող զանդակների հանդիսաւոր զգրդիւնին կցում էր իւր երգերը:

Այդ օրից սոխակը սուրբ թռչուն դարձաւ: Նորա երգը լսում է ամեն տանից: Բանաստեղծները իրանց յօրինած քներում փառաբանում էին նորան: Նորա

քանդակը զարդարում էր ամեն մի կամար, աշտարակ, շաղրւան կամ հասարակական շինութիւն:

Սոխակը ընդունւած էր թագաւորի խորհրդում և ոչ մի կարեւոր պետական գործ չէր վճռւում նախ՝ քան նա չէր կրկնում պետական սոխակի առաջ և գուշակողները չէին թարգմանում նախարարներին այն բոլորը, ինչ որ թռչունը իւր երգով յայտնում էր՝ իբրեւ գործին վճիռ:

II

Պատանի թագաւորը որսորդութիւն շատ էր սիրում: Երբ ամառը եկաւ, նա մի անգամ գնաց որսի, ունենալով հետը բազէ և շուն և իբրեւ որսակիցներ՝ իւր իշխանների փառաւոր խումբը:

Ենչպէս պատահեց՝ թագաւորը բաժանեց նոցանից և աննկատելի կերպով ընկաւ մի մեծ անտառ և թէև ըստ իւր համոզման՝ նա ընտրել էր ուղեկիցներին հասնելու համար ամենակարճ ճանապարհը, բայց նա գնում էր, գնում, սկզբում լի յոյսերով. սակայն յետոյ սկսեց երկմտել և թուլանալ:

Սութն ընկաւ. իսկ թագաւորը դեռ թափառում էր ամայի և անծանօթ տեղերում: Յետոյ՝ յանկարծ մի մեծ փորձանք էլ վերայ հասաւ:

Անտառի աղօտ լուսով նա քշեց իւր ձին խիտ բուսած ծառերի և ձիւղերի մէջը և յանկարծ տեսաւ իրան սեպաձև և ժայռոտ վիհի բերանում. բայց արդէն ուշ էր: Երբ ձին իւր հեծեալի հետ

գլորեցին ձորախուռչը, երևաց, որ կոտրել է ձիու վիզը, իսկ թագաւորի ոտը: Դժբաղդ փահալալը ընկած էր գետնին, տանջւում էր անտանելի ցաւով և ամեն մի ժամը նորան թւում էր մի մի երկայն ամիս: Նա ամեն կերպ լարում էր իւր լսողութիւնը, աշխատելով որսալ մի որ և է ձայն, որ կարողանար նորան ազատելու յոյս տալ. բայց չը լսեց ոչ մի ձայն, ոչ մի եղջիւրի կոչ, ոչ շների հաչոց: Այն ժամանակ, կորցնելով բոլոր յոյսը, թագաւորը ասաց.

— Ե՛հ թող գալիս է գայ մահը, միևնոյնն է՝ մի օր նա լինելու է:

Այդ իսկ րոպէին սոխակի զիւլ, արծաթի ձայնը հնչեց գիշերեաց անկողով անդորրութեան մէջ:

— Փրկւած եմ, բացականչեց թագաւորը, փրկւած եմ: Ղա սուրբ թռչունն է և ճիշդ դուրս եկաւ մարգարէութիւնը: Իրանք աստուածները ինձ հովանաւորել էին, որ ես սխալ չանեմ:

Նա խեղդւում էր յանկարծակի ուրախութիւնից և չէր իմանում, ինչպէս յայտնէր իւր գոհութիւնը: Այժմ նորա ականջին կարծես թէ ձայներ էին հասնում, ձայներ, որ նորան օգնելու էին գալիս, բայց յետոյ սկսեց կամաց կամաց հիասթափւել... օգնութիւն ոչ մի կողմից չէր երևում:

Կրկին սկսեցին տաղտկալի, երկայն սպասողական ժամեր թագաւորի համար: Օգնութիւն չը կարժէ և սուրբ թռչունը շարունակում էր երգել: Նա մտածեց, որ միթէ նա սխալ ընտրութիւն է արել,

սակայն աշխատեց իւր մէջ թմրացնել այդ կասկածի զգացմունքը:

Արշալոյսի մօտերքը սոխակը դադարեց: Առաւօտը բացեց և նորա հետ էլ երևան եկան տանջւած մարմնի ծարաւը և քաղցը: Իսկ օգնութիւն չը կար գեռ: Սրը անցաւ. մօտենում էր մթնանալուն: Վերջապէս՝ թագաւորը բարկութիւնից անիծեց ոտխալին:

Նորանից յետոյ լսեցին անտառի միջից տորդիկի զայլալիկները: Թագաւորը մտածեց ինքն իրան, որ նա գուցէ սխալ է ընտրել: Այժմ գուցէ օգնութիւնն էլ գայ:

Օգնութիւնը սակայն չէր երևում դեռ: Թագաւորը այնուհետեւ մի քանի ժամ էլ պառկեց անզգայ դրութեան մէջ: Երբ որ նա զարթնեց, լսեց կանեփուկի կրգելը: Թագաւորը նորան լսում էր սառնասիրտ: Նա հաւատը կորցրել էր: Նա մտածեց.

— Այս թռչունն էլ ինձ չի փրկելու, ես, և տունս և ժողովուրդս կորած ենք իսպառ:

Դժբաղդը շուռ եկաւ միւս կողքի վերայ և պատրասեց մեռնելու, որովհետեւ քաղցածութեան, ծարաւի և ցաւերի տանջանքները մտածել էին տալիս մահւան մասին: Եւ հէնց ուզում էլ էր մեռնի, որպէս զի աղատուի տանջանքներից: Վիրաւորը երկայն ժամեր պառկեց զրկւած յիշողութիւնից, զգացմունքներից և շարժումներից:

Վերջապէս զիտակցութիւնը նորից վերադարձաւ:

Երբորդ առաւօտն էր լուսանում: Ո՛հ, որչափ հոյակապ երևաց նորա յօգնած աչքերին լոյս աշխարհքը: Եւ պատանու սրտում եռաց ապրելու սատուիկ ցանկութիւն, և այդ սրտի խորքից ջերմ աղօթք բղխեց դէպի նախախնամութիւնը, որով զթութիւն էր աղերսւում և ապրելու ու բարեկամներին տեսնելու ողորմութիւն:

Այդ իսկ վայրկեանին հեռու տարածութիւնից հասաւ նորա ականջին խուլ, քնքոյշ և անորոշ, բայց նորա կարօտ քաշած լսելիքին համար անասելի քաղցր մի ձայն.

— Ահա-ոհ... քիւր... ահա-ոհ... ահա-ոհ... քիւր...

— Այ, ահա մի ձայն, որ անհամեմատ աւելի հաճելի է ինձ համար, քան սոխակի, տորդիկի և կանեփուկի ձայները: Նա իւր հետ բերում է ո՛չ միայն յոյս, այլ և օգնութեան հաւատ. և ե՛րբ ահա՛ ես ինձ կարող եմ իսկապէս փրկւած համարել: Սուրբ երգիչը ինքն է իրան ընտրել, ինչպէս նախասահմանել էր պատգամախօսը: Մարգարէութիւնը կատարւեց— և իմ կեանքը, իմ տունը և ժողովուրդը փրկւած են: Այսուհետեւ էլը պէտք է լինի սուրբ երգիչ:

Փրկարար մեղեդին քանի զնում էր՝ մօտենում էր, դառնում էր բարձրաձայն և խեղճ վիրաւորի լսելիքը փայփայում էր հաճելի: Եւ միևնոյն ժամանակը խելօք աւանակը իջնում էր սուր զառիւկայր

ժայռից, ձանապարհին մէկ-մէկ խոտ կտրելով և ուրախ աղաղակելով:

Տեսնելով սատկած ձիուն և վիրաւոր թագաւորին, էլը կանգ առաւ, մօտեցաւ և նրանց հոտոտեց պարզասիրտ և զարմացական հարցասիրութիւնով: Թագաւորը փայփայեց բարի կենդանուն: Իսկ սա իջաւ ծնկների վերայ, ինչպէս նա սովոր էր այդ անել իւր մանուկ-տիրուհու համար:

Մեծ դժւարութեամբ և շարժարանքով թագաւորը բարձրացաւ էջի մէջքը և բռնեց նորա ականջներին: Ելը ձանապարհ ընկաւ, շարունակելով իւր երգը և հասցրաւ թագաւորին զիւղական աղջկայ տնակը: Աղջիկը իւր տեղը, իւր մահիճը տւաւ թագաւորին և նորան կազդուրեց այժի կաթով: Յետոյ վազեց յայտնելու, ում որ կարողանում էր պատահել թագաւորին որոնող խմբերից, այս դէպքի մասին:

Թագաւորը լաւացաւ: Նորա առաջին գործնեղաւ յայտարարել էլին սուրբ և անմատչելի կենդանի, երկրորդ— զձեւ այդ յարգելի չորքոտանուն իւր խորհրդականների դասը և նշանակել նորան առաջին պետական նախարար: Երբորդ՝ հրովարտակով նահրամայեց ամենուրեք ոչնչացնել սոխակի քանդակները և փոխարինել նրանց սուրբ աւանակի արձաններով և նկարներով և վերջապէս, չորրորդ, հրովարտակով յայտնեց, որ երբ որ փօքրիկ զիւղական աղջկայ տասն և հինգ տարին լրանայ, նա պէտք է դառնայ թագուհի: Եւ թագաւորը իւր խոստումը կատարեց:

Այսպէս է ասում գերմանական աւանդութիւնը: Դորանով բացատրւում է՝ թէ ինչու այնտեղի հին, խարխուլ պատերը և կամարները զարդարւած են ժամանակի հոսանքից փչացած էշի նկարներով: Աւանդութիւնով նոյնպէս պարզւում է՝ թէ ինչու դարերի ընթացքում էլը եղել է նախագահ-նախարար այս թագաւորութեան պետական խորհրդում, ինչպէս այդ հանգամանքը տեղի ունի մինչև այժմ և պետական խորհուրդներից շատերում: Վերջապէս բացատրւում է և այն, թէ ինչու այս փոքրիկ թագաւորութեան մէջ դարերի երկայն ժամանակում բոլոր մեծ բանաստեղծները, բոլոր նշանաւոր ճարտասանական ձառերը, բոլոր յայտնի շարադրութիւնները, բոլոր հանգիստւոր ժողովները և բոլոր պետական մատենաները միշտ սկսւում են այս ոգևորիչ ձևերով:

Ահա-ոհ... քիւր... ահա-ոհ... ահա-ոհ... ահա-ոհ... քիւր... ահա...

ՍԱՓՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամեն բան աշխարհումս փոխւում է, բացի սափրիչներից, նոցա վարւեցողութիւնից և սովորութիւններից: Դա երբէք չի փոխւում: Կնչ որ մարդ սափրասենեակում տեսել է առաջին անգամը այնտեղ մտնելուց, այն միւլենոյնն էլ, առանց առաջադիմութեան, նա կը տեսնի և յետոյ, մինչև իւր կեանքի վախճանը:

Այսօր առաւօտեան ես գնում էի, ըստ իմ սովորութեան, երեստ ածիլել տալու: Ես տեսայ, որ սափրատանը մի մարդ է արդէն մօտենում միւս փողոցից, մի հանգամանք, որ զարմանալի կերպով միշտ պատահում է: Ես քաջերս մեծացրի. բայց նպատակիս չը հասայ: Պարոնը մօտա դռնամէջը հէնց այն բուլիին, երբ ես հասել էի նոյնպէս դռանը: Ես մտայ նորա ետևից. բայց նա արդէն բռնեց միակ աղաւթ մնացած աթոռը, որի մօտ կանգնած էր սափրիչը:

Եւ այդ միշտ այդպէս է պատահում: Ես նստեցի սպասելու, յուսալով, որ կը կարողանամ միւս երկու սափրիչներից բռնել նոցանից աւելի վարպետի

աթուղ, որովհետեւ այդ «աւելի վարպետը» սկսել էր արդէն իւր մուշտարու մագերը սանրել, մինչդեռ նորա ընկերը դեռ օծում էր իւր յաճախորդի մագերի խոպոպները:

Ես մեծ հետաքրքրութեամբ հետևում էի սափ-րիչների գործողութեան: Երբ ես նկատում էի, որ № 2 սափրիչը առաջ էր ընկնում, իսկ № 1-ը կանգ էր առնում մի րոպէ, խօսքի բռնելով խանութը մտնող ապրանք առնողների հետ և թողնում էր իւր ձեռքի գործը, ես հասարակ կասկածից անցնում էի վրդոված դրութեան: Իսկ երբ № 1-ը վերջապէս դարձաւ իւր գործին իւր ընկերին հաւասարեց և արդէն բաց էր անում յաճախորդից սրբիչը և նորա թշերից սրբում էր պուշքը, որից յետոյ նոցանից մէկը աւելի վաղ պէտք է ասէր «գաջ հետեւալը», — ես անյայտութիւնից սկսեցի կարծես խեղդել:

Իսկ երբ ամենավճռական վայրկեանում՝ № 1-ը սկսեց խոզանակով ուղղել իւր պարոնի ունքերը, ես իմացայ, որ այդ վայրկեանով նա կորցրաւ իւր առաջ-նութիւնը և ես այնպէս սաստիկ զայրացայ այդ բա-նից, որ դուրս եկայ սափրասենեակից, որպէս զի չընկ-նեմ № 2-ի ձեռքը, որովհետեւ ես այնքան ամուր բնաւորութիւն չունեմ, որ սափրիչին ասեմ՝ թէ ես նորան չեմ ուզում, այլ սպասելու եմ, մինչև միւս սափրիչը ազատուի:

Ես փողոցում կանգնեցի մօտ տասնեւհինգ րոպէ

և դարձայ յուսալով, որ այժմ ցանկացածիս կը հաս-նեմ իսկոյն: Սակայն այժմ բոլոր տեղերը բռնած էին և դեռ մի չորս պարոն էլ նստած սպասում էին, լուռ, անխօս, բարկացած և տխուր, ինչպէս որ լի-նում են սափրատանը նստած և հերթին սպասող յաճախորդները:

Ես նստեցի մի կողմ, հին գահաւորակի վերայ և զբաղւեցի ընթերցանութիւնով: Ես կարդում էի շրջանակներում դրած զանազան յայտարարութիւն-ները, որոնք անխիղճ կերպով փառաբանում էին մագեր ներկելու չը գիտեմ ինչ դեղեր, նայում էի շիշերին կպցրած ցուցադրերը, ուսումնասիրում էի պատերին կպցրած, պատերազմական աժան պատկեր-ների աղտոտած և պատռոտած մնացորդները, նա-խագահների, հեշտասէր թեք ընկած տուլթանների, անհամ և միշտ երիտասարդ աղջիկների՝ պատկերները և անիծում էի ուրախ դեղձանիկին և բարձրագոյ թութակին, որոնք համարեա ամեն մի սափրատան անհրաժեշտութիւնն են կազմում: Երբ այդ բոլորից զգւեցի, սկսեցի թերթել անցեալ տարւոյ պատկե-րազարդ թերթի քիչ պատռոտած համարները, որոնք անկարգ թափւած էին աղտոտ կոլոր սեղանի վերայ և խորասուզեցի հին, անցած-դնացած եղելութիւն-ների անձուների պատկերների աշխարհը:

Վերջապէս հասաւ և իմ հերթը: Լուեց սափ-րիչի ձայնը՝ «գաջ հետեւալը» և ես ընկայ հէնց էլի № 2-ի ձեռքը: Այդ միշտ այդպէս է պատահում: Ես

Համեստ ձայնով նկատեցի, որ շտապում եմ. բայց նա խսկի աշնումը չը գցեց: Յետ տարաւ գլուխս և վզիս տակից կապեց անձեռոցիկը: Յետոյ մատներով կոխեց սրբիչը օձիքիս տակը: Նոյն մատներով նա խառնեց իմ մազերը և յայտնեց, որ պէտք է նորանց խուզել: Ես պատասխանեցի, որ չեմ ուզում խուզել ապա: Նա դարձեալ մատներով վերի վայր արաւ մազերս և ասաց, որ ներկայ Հանգամանքներին նայած՝ չափազանց նոքա երկայն են և պէտք է կարճացնեն. նա մանաւանդ ետեւի կողմից: Ես բացատրեցի, որ միայն մի շաբաթ է, ինչ ես խուզել եմ տեւ մազերս: Սափրիչը մի վայրկեան տխուր մտածմունքի մէջ ընկաւ և յետոյ մի տեսակ նախանձոտ արհամարհանքով հարցրեց.

— Ո՞վ է խուզել:

Ես նորան իսկոյն հանգստացրի՝

— Հէնց դուք ինքներդ:

Յետոյ սկսեց փրփրացնել սապոնը, երբեմնապէս կանգ առնելով և հայելուն մօտենալով, որպէս զի լաւ տնտղի կամ իւր կերպարանքը կամ մի որ և է պուզուկ: Յետոյ սապոնեց վերից մինչև ներքեւ երեսիս մէկ կէսը և ուզում էր սապոնել միւս մասն էլ, երբ ջանկարծ նորա ուշքը զրաւեց շների մի կռիւ: Նա վազեց լուսամուտի մօտ և կանգնեց այնտեղ, զւարճանալով կռիւ տեսքով, մինչև որ զրազ չեկաւ միւս երկու սափրիչների հետ և երկու շիլինգ տանուլ չը տուաւ: Այս դէպքը ինձ մեծ ուրախութիւն պատ-

ճառեց: Նա վերջացրեց սապոնելը և աւելորդ փրփուրները սկսեց ձեռքով թռցնել դէն:

Դորանից յետոյ սկսեց երկայն ժամանակ ածելին սրել մի ինչ որ հնացած կաշու վերայ և շարունակելով այդ սրելը՝ նա պատմեց նախընթաց երեկոյի ժողովրդական դիմակահանդէսի մասին, որտեղ նա ինքը եղել է՝ վերան զցած կարմիր ծիրանի, որի շրջակարը սպիտակ աքիսի մորթից է եղել, ինչպէս այդ վայել է թագաւորներին: Նորա ընկերները ակնարկներ արին՝ թէ մի տիկին հիացած է եղել դիմակաւոր թագաւորից. սափրիչս՝ թէև ասաց, որ նորա ընկերները նորան ձանձրացրին այդ ակնարկներով, բայց ինքը շատ ուրախ էր այդ վայրահաշու թիւնից և ուզում էր, որ նա շարունակէ:

Այս հանգամանքը նորան զրդեց մի անգամ ևս նայելու հայելուն: Նա ածելին վայր դրաւ և իւր մազերը սանրեց, ճակատի վերայից մի խոպոպ յետ տանելով և մի նուրբ զուգաչափութեամբ քունքի մազերը սանրեց ականջների վերայ: Մինչ այս մինչ այն՝ իմ թշերին քսած սապոնը չորացաւ, և ըստ երևութիւն, ծծւեց կաշւիս մէջ:

Վերջապէս սափրիչս սկսեց ածիլել, նախօրոք մատները պարզելով իմ երեսի վերայ, որ տարածի կաշին, և անդադար գլուխս պտտեցնելով այս ու այն կողմ, ինչպէս նա չարմար էր դատում: Քանի որ նա երեսիս կողքի մասերումն էր, ես չարշարուում էի: Իսկ երբ նա սկսեց ծնօտս քերել, քերթել և մաշ-

կել, պէտք է խոստովանեմ, արտասուքը լքցրաւ աչքերս:

Յետոյ սափրիչը բռնեց քթիցս, որպէս զի ապահով կերպով կարողանայ ածիլել վերի շրթունքիս անկիւնը: Այս հանգամանքի շնորհիւ, ես մի գիւտ արի. ես համոզեցի, որ սափրիչիս պարտաւորութիւնների մէջն է եղել և նաւթի լամպարների սրբելը (նաւթի հոտը ես կարողացայ ճանաչել): Իսկ առաջ ես թեթեւամտաբար ինձ հարց էի տալիս, արդեօք ո՞վ էր այդ բանը կատարում՝ սափրիչները թէ նոցա տէրը:

Միւլենոյն ժամանակը ես զուշակութիւններ էի անում, թէ որտեղ է սափրիչս բարեհաճելու երեսս կտրելու, բայց նա իմ վճռից առաջ ընկաւ և նախ, քան ես կը կարգաւորէի մտածմունքներս, նա թըռցրաւ ծնոտիս կաշու մի կտորը:

Պորանից յետոյ՝ սրեց ածելին, որ ի հարկէ՝ նա կարողէր կտրելուց առաջ անել: Պէտք է ասեմ, որ ես չեմ սիրում շատ տակուց ածիլելը և չէի ուզում թոյլ տալ, որ նա երկրորդ անգամ ինձ քերթի: Ուստի համոզում էի նորան, որ նա թողնի անտանելի գործիքը: Ես երկիւղ էի կրում, որ նա ածելին պատրաստում է իմ ծնոտի աչն մասի համար, ուր մի փոքրիկ բշտիկ կար, որի ածիլելը կրկնելուց շատ պէտք է զաւեր: Բայց սափրիչը հանգստացրաւ, ասելով, որ նա պէտք է միայն փոքր ինչ հաւասարեցնի և հէնց այդ վայրկեանին՝ դիպաւ արգելած տեղին:

Ինձ վախեցնող կտրածքը տեղի ունեցաւ և սկսեց սաստիկ ցաւ:

Այդ ժամանակ իմ չարչարողը թաթախեց սրբիչը դափնեաբալի հեղուկի մէջ և սկսեց նորանով սւաղել երեսս. հարցնող լինի թէ երբ և իցէ մէկը աշխարհումս այդ տեսակ լւացե՞լ է իւր երեսը: Յետոյ սկսեց սըրքիչի չոր մասով հարել երեսս, կարծես թէ երբ և իցէ աշխարհումս մէկը այդ տեսակ սրբել է իւր երեսը: Բայց սափրիչները քիչ գիտեն քրիստոնէաբար երես սրբելը:

Այնուհետեւ նա նորից թացացրեց կտրած տեղը, ածեց վերան պուզը, կրկին թացացրեց և երևի անվերջ կը թացացնէր և պուզը կ'ածէր, եթէ ես վճռաբար չը բողբէի: Այն ժամանակ թշառականը վերջին անգամ պուզը ածեց երեսիս, յետոյ բռնեց մագերս խուրձի նման և սկսեց խառնփնթորել, վերիվայր անել: Յետոյ առաջարկեց ինձ, որ լւանալ տամ գլուխս սապոնաջրով և սկսեց հաւատացնել, որ իմ մագերի համար դա շատ կարևոր է: Ես պատասխանեցի, որ երեկոյց օրը ինքս լաւ լւացել եմ բաղնիսումը: Ուրեմն կրկին նորա խօսքը կտրեցի:

Բայց սափրիչս ձեռք չը վեր առաւ և առաջարկեց ինձ մի ինչ որ մագերի համար կախարդական հեղուկ: Ես մերժեցի: Այն ժամանակ՝ նա սկսեց գոգել «տուալետի հրճանք» անունով նոր մի օժանդիք, որ ուզում էր ինձ վերայ կայցնել: Արկին մերժեցի: Բայց նա յետ չը կացաւ ինձնից և առաջարկեց մի ինչ որ

իւր հնարած անպիտան ատամնադեղ: Երբ որ այդ էլ չը գնեցի, նա ինձ առաջարկեց, որ գոնէ մի զմեկի գնեմ:

Այս առուտուրի անաջողութիւնից յետոյ, նա չը լսելով բողոքիս՝ ինձ ոտից մինչև գլուխ սրսկեց հօտաւէտ հեղուկով, մազերս տեղահան արաւ և բաւական էլ դուրս հանեց արմատից, իսկ մնացածները սանրեց, կարգին ձղեց և հարթեց:

Վերջապէս երբ նա սկսեց իմ նոսր ունքերս էլ սանրել և շարունակել իւր լեզագարութիւնը—ես լսեցի կէսօրւայ զանգը և այդտեղ սրտի ցաւով իմացայ, որ հինգ րոպէ ուշացել եմ երկաթուղու գնացքից: Այդ ժամանակ միայն նա հանեց վզիցս սրբիչը, զգոյշ թափ տւաւ երեսիս վերայ եղածը, մի անգամ էլ խոզանակը խաղացրեց ունքերիս վերայով և ուրախ բացականչեց.

—Գայ հետևեալը:

Այս միևնույն սափրիչը երկու ժամից յետոյ յանկարծ ուշաթափւեց և մեռաւ կաթւածից:

Ես չարախնդացութեամբ ուզում եմ վրէժս առնել նորանից. ուստի վճռել եմ գնալ նորա թաղման:

X ՆՈՐ ՔՐԷԱԿԱՆ ՄԻ ԲԱՌ

Վերջին տասնեակ տարիներում դատաստանական աշխարհը երևան հանեց խելագարութեան շատ զարմանալի դէպքեր, որոնց մասին առաջ չիշատակուում էր միայն պատմութեան մէջ¹⁾:

I

Մի այդպիսի դէպք տեղի ունեցաւ, զորօրինակ, սորանից քսան և երկու տարի առաջ յանցաւոր Բօլդուինի գործում:

Բօլդուինը երեսացութիւնից սկսած յայտնի էր, իբրև շարասիրտ, քինասպահ և կուարար մի անձ: Մի անգամ նա մի տղայի աչքը հանեց և այնպէս մարսեց այդ բանը, որ ոչ ոք չէր կասկածիլ անգամ՝ թէ նա երբ և իցէ զղջալու հակում ունեցած լինի: Եւ քանի քանի այդ տեսակ անգութ գործեր էր նա կատարել:

¹⁾ Տուէնը աւստեղ ծաղրում է այն դատերը, երբ յանցաւորներին արդարացնում են խելագարութեան պատճառով կամ երբ իսկական խելագարութիւնները պատժի են ենթարկւում:

Բայց վերջապէս մի անգամ նա իրան թոյլ տւեց մի արտաքոյ կարգի վարմունք: Մի օր երեկոյեան, իսկոյն մութն ընկնելուց յետոյ, նա կանգ է առնում մի տան առաջ, զանգահարում է և երբ տան տէրը երևում է դռնամէջ, Բօլդուինը արձակում է նորա վերայ ատրճանակը, նորան վայր գծում և պատրաստում է փախչելու. բայց իսկոյն բռնւում է:

Դեռ երկու օր այդ դէպքից առաջ, նա իւր զւարճութեան համար վիրաւորած է եղել մի անգամալոյծի անպատիժ կերպով:

Այս տեսակ անձ էր Բօլդուինը: Նորա գործը շարունակւում էր երկայն ժամանակ և մեծ աղմուկ էր հանում: Բոլոր համայնքը սաստիկ զայրացած էր Բօլդուինի վերայ: Նստերը ասում էին, որ բաւական է, որչափ այդ խտասիրո և անողոր շարագործը վիշտ է պատճառել իւր կեանքի ընթացքում, այժմ նա պէտք է օրէնքի առաջ պատասխանի և պատժւի:

Բայց այդ ասողները սխալւել էին:

Դուրս եկաւ, որ Բօլդուինը իւր յանցանքը գործելու ժամանակը խելագար դրութեան մէջ է եղել: Արդարացնելու հնարը գտնւած էր:

Պաշտպանը աշխատում էր ապացուցանել, որ Բօլդուինը սպանութեան օրւայ առաւօտեան ինն և կէս ժամին խելագարւել էր և այդ դրութեան մէջ մնացել ճիշդ տասն և մէկ ժամ ու կէս:

Այս հանգամանքը մեղմացրեց գործած յանցանքը և հերոսը հրատարակեց արդարացրած:

Ուրեմն, եթէ դատաստանը, ղիցուք, ուշադիր եղած լինէր զրգուած տգէտ համայնքի ձայնին, նա պէտք է սխալմամբ սոսկալի պատժի ենթարկած լինէր մի խեղճ մարդու, որ միայն կարճատև խելագարութիւն է ստացած եղել:

Բօլդուինը դուրս եկաւ դատաստանից մաքուր, ինչպէս աղաւնի: Եւ թէև ազգականները և ծանօթները ըստ պարտականութեան բարկացել էին համայնքի վերայ, սորա կասկածների և կարծիքների պատճառով, այնու ամենայնիւ բանը քնացրին, իրանց բարկութիւնը տեղ չը հասցրին և համայնքը չը հալածեցին:

Բօլդուինների ազգը շատ ունեւոր և հարուստ էր:

Այս դէպքից յետոյ երկու անգամ էլ կրկնեց Բօլդուինի խելագարութիւնը և երկու անգամուամբ էլ նա սպանեց այնպիսի մարդկանց, որոնց հետ քէն էր ունեցել: Իւրաքանչիւր դէպքում սպանութեան կից պարագաները այնպէս ծանրացնում էին մեղը և եղեռնագործութիւնը կատարել էր այնպիսի անգութ և նենգ կերպով, որ եթէ Բօլդուինի խելագարութեան անունը չը լինէր, նորան կախած պէտք է լինէին առանց այլևայլութեան:

Այն էլ սակայն ասեմք, որ այդ արդարանալը շատ էլ հեշտ գլուխ չ'եկաւ: Առաջին յանցանքից ազատւելու համար հարկաւոր եղաւ նորա հասարակական և տոհմական զիրքի ազդեցութիւնը, իսկ

երկրորդի համար — պահանջեց նաև ո՛չ պակաս, քան տասն հազար զօլլար փող:

Ասում են, որ սպանւածներից մէկին Բօլդուինը դեռ տասներկու տարի սորանից առաջ սպառնացած է եղել մեռցնելու: Տեսէ՛ք հիմի բանը: Այնպէս է պատահում, որ այն խեղճը անցնում է եղել խուլ փողոցով հէնց այն րոպէին, երբ Բօլդուինի խելադարութիւնը բռնած է եղել և թշուառը ստանում է գնդակի հարւած մէջքի կողմից և ընկնում:

II

Յիշենք նոյնպէս Հակետի գործը:

Հակետը երկու անգամ հրապարակապէս յարձակւել էր գաւազանով գերմանացի մսագործի վերայ և երկու անգամ էլ լաւ ծեծ էր կերել մսագործից:

Հակետը փառասէր, հարուստ և լիրբ մի մարդ էր, որ շափազանց պարծենում էր իւր ծագումով և տոհմով և երևակայում էր թէ շրջապատողները պէտք է նորա հարստութեան առաջ գլուխ խոնարհեն:

Նա ամբողջ երկու շաբաթ հնարներ էր որոնում մսագործից իւր վրէժը հանելու և ահա մի օր, յանկարծակի խելադարւելով, զինւում է ոտքից մինչև գլուխ, գնում է քաղաք և սպասում է փողոցներում մի քանի ժամ մինչև պատահում է մսագործին, որ հանգիստ ու հանդարտ անցնելիս է լինում իւր կնոջ հետ թեւ թեւի տւած: Այն ժամանակ Հակետը թագ է կենում մի դռան ետև և երբ զոյգը

մօտենում է, նա դանակը խրում է մսագործի կողորդը և իսկոյն սպանում: Կինը բռնում է ընկնող մարմինը և գետին դնում:

Հակետը նայում է այրիացած թշուառ կնոջը և կատակի ձևով ասում, որ ինքը այնքան ճարպիկ և վարպետ կերպով է հարւած տւել, որ այրին կարող է, եթէ ուզենայ, երկրորդ ամուսնութեան մասին ազատ հոգալ:

Այս եղելութիւնից յետոյ Հակետը իւր մի բարեկամին պատահելուց ասել է, թէ իւր հասարակական դիրքը՝ համեմատած աննշան մսագործին հետ՝ կարող էր մի այդ տեսակ անսպասելի վարմունք առաջ բերել: Վերջին երկու հանգամանքը, այսինքն մսագործի կնոջը ասածը և այդ բարեկամին հաղորդածը, ընդունւել էին դատաստանի ժամանակ իբրև խելագարութեան ապացոյցներ և Հակետը այդպիսով ազատւել էր պատժից: Առաջ երդւեալները չեն ուղում եղել այս ապացոյցները բաւականաչափ համոզիչ համարելու, որովհետև յանցաւորը սպանելուց առաջ խելագար չէ եղել երբէք և սպանութիւնից յետոյ էլ իսկոյն խելքը գլխին է եղել, ինչպէս միշտ: Բաց էլ իսկոյն խելքը գլխին է եղել, որ Հակետի հօրեղբօր երբ փաստաբանը յայտնում է, որ Հակետի հօրեղբօր որդին խելագար է եղել և որ ինչ զարմանալին է, ունեցել է Հակետի քթին շատ նման մի քիթ, պարզւում է, որ Հակետին խելագարութիւնը բնականաբար կարող էր այցելել: Նւ նորան արդարացնում են:

Դեռ բանը որտեղ է հասնում, որ Հակետի կնոջ

բարեկամները իրանց վիրաւորւած են զգում այս դէպքից:

Անկարելի է, սակայն, հաղորդել խելագարութեան այն զարմանալի դէպքերը, որ վերջին երեսուն քառասուն տարիներում զբաղեցրել է հասարակութեան ուշադրութիւնը:

III

Այժմ պատմենք մի քանի ուրիշ տեսակ դէպքեր էլ:

Երեք տարի առաջ, զօրօրինակ, քննուում էր Ջիւրջինի գործը, որ կայացած էր հետեւեալում: Ջիւրջին անունով մի աղախին մի խուլ և մութ գիշեր մանում է իւր տիկնոջ ննջարանը և դանակով մաս մաս է անում խեղճ կնոջը: Յետոյ մարմինը քաշ է տալիս սենեակի մէջ տեղը, ոտով կոխտում, աթոռներով ծեծում և ամեն կերպ ջարդում: Յետոյ չարագործը պատռում է մի փափուկ բարձ, միջի փետուրը դուրս թափում սենեակի մէջը, վերան ածում նաւթ և վառում, որպէս զի իւր յանցանքի հետքը ծածկի:

Յետոյ վեր է առնում սպանւած տիկնոջ փոքր երեխային իւր արիւնաթաթախ ձեռքերը և, դուրս գալով տնից, վազում է ոտաբոբիկ ձիւնի վերայով մի հեռու ծանօթի տուն և այնտեղ հնարում է մի անհաւատալի, անմիտ պատմութիւն, իբր թէ օտար մարդիկ եկել են նորա տիկնոջ տունը և կրակ տել:

Յետոյ սկսում է աղեկտուր լաց լինել և չը մտածելով, որ նորա ձեռքերի և շորերի վերայ եղած արիւնը կարող է կասկած յարուցանել, անզգուշաբար անհարկներ է անում, որ նա երկիւղ է կրում, թէ մի գուցէ այն մարդիկը սպանած լինեն նորա տիկնայը:

Շատ հարց ու փորձերից, աղախնի սեփական ցուցումներից և վկաների տւած տեղեկութիւններից բոլորովին պարզ կերպով հաստատուում է, որ տիկինը միշտ բարի է եղել դէպի իւր աղախինը և որ սպանութեան գործում ոչ մի վրէժի նշոյլ անգամ չէ եղել. նոյնպէս պարզւում է, որ աղախինը ոչ մի բան չէ վեր առել կրակ տւած տնից, մինչև անգամ ինքը առանց կոշիկի է դուրս պրծել, այնպէս որ կողոպտելու էլ մտադրութիւն չէ ունեցել:

Ընթերցողը այժմ երևի մտածում է՝ թէ այստեղ արդէն անկասկած խելագարութեան դէպք է: Բայց հէնց այս անգամ նա կը սխալւի:

Յանցաւոր աղախնի պաշտպանութեան համար ոչ ոք ծպտուն չը հանեց, խելագարութեան անունը չը յիշեց: Դատաստանը որոշեց խիստ պատիժ: Չը գտնեց մէկը, որ նահանգապետին ղիմէր՝ պատիժը թեթեւացնելու համար և յանցաւորը կախեց խկոյն:

IV

Մի քանի տարի սորանից առաջ հրատարակւած էր լրագիրներում մի պատանու բերանից քաղած հետաքրքրաշարժ մի խոստովանութիւն: Ակըզ-

բից մինչև վերջը այդ խոստովանութիւնը մի անկապ, խառնինթոր ցնորաբանութիւն էր, ինչպէս և նորա այն երկայն ճառը, որ արտասանել էր կառավանատեղում՝ կախեւելուց առաջ:

Այդ պատանին բոլորովին անբացատրելի պատճառով որոնում է եղել այնպիսի մի հնար, որ տգեղացնի մի ջահիլ աղջկայ երես, որ ոչ ոք չը ցանկանայ նորա հետ պսակել: Ինքը սիրում է է եղել աղջկան և մտադիր է է եղել հետը պսակելու. բայց և է է ցանկացել թոյլ տալու, որ մի ուրիշը պսակւի:

Նա չի համաձայնում եղել աղջկայ հետ մի որ և է տեղ գնալ զբօսնելու, բայց և ոչ ոքի էլ թոյլ չի տալիս եղել օրիորդին ուղեկցելու:

Մի անգամ պատանին հրաժարւում է այդ աղջկայ հետ հարսանիք գնալուց. բայց երբ տեսնում է, որ աղջիկը մի ուրիշ երիտասարդի հետ գնացել է, ինքն էլ գնում է և ճանապարհին սպասում է, որ պատահի դոցա կառքին և կամ աղջկան ստիպի յետ դառնալ կամ թէ նորա ուղեկցին սպանի տեղն ու տեղը:

Աղջկայ երեսը տգեղացնելու միտքը ամբողջ տարի նորան հալածում է եղել: Նւ վերջապէս նա սկսում է իրագործել և յաջողեցնում է իւր մտադրութիւնը:

Մի անգամ, երբ աղջիկը նստած է լինում ընթրիքի իւր ծնողների, եղբայրների և քոյրերի հետ, չարագործը մտադրւում է այնպէս խփել ատրը-

ճանակը, որ չը վնասելով առողջութեան՝ խաղիսզի փոքր ինչ թուշը և տգեղացնի դէմքը. բայց դժբաղդաբար գնդակը մի քիչ թեքւում է և աղջկան սպանում:

Սպանողը մինչև իւր կեանքի վերջին վայրկեանը մեղալիրում էր ճակատագրական այն բերմունքը, որ ստիպել էր աղջկան շուռ տալ իւր երեսը հէնց ուղիղ հարւածի ժամանակը: Նւ մինչև վերջն էլ՝ նա համոզւած էր, որ աղջկայ մահւան պատճառը ինքը աղջիկն է եղել:

Այս անկասկածելի խելագուրկը կախեց:

Բայց խելագարութեան խնդիր չը յարուցւեց:

V

Ինչպէս երևում է՝ խելագարութիւնը աշխարհումս բազմանում է, իսկ յանցանքը անհետանում: Այժմ՝ էլ սպանողների անուն չենք լսում:

Առաջւայ ժամանակները, եթէ դուք մի մարդ էիք սպանած լինում, կարող էր պատահել, որ ձեր խելքը գլխներիդ չէ եղել. իսկ այժմ, եթէ դուք լաւ տոհմի զաւակ էք և հարուստ, ձեր վարմունքը հէնց ինքը—կը համարւի ապացոյց ձեր խելագար լինելուն:

Նոյնպէս էլ՝ եթէ մի լաւ տոհմի անդամ, որ բարձր հասարակական դիրք ունի, եթէ մի բան զողանայ, նորան պաշտպանող փաստաբանը վերագրում է այդ վարմունքը մոլութեան, առանձին հիւանդոտ

սովորութեան կամ ուրիշ խօսքով՝ մի տեսակ խելագարութեան:

Եթէ բարձր դիրք ունեցողին մէկը վասնում է իւր կարողութիւնը անբարոյական վարքով և վերջացնում է իւր կեանքը թոյնով կամ զնդակով, նորա մասին ասում են, որ նա ենթարկւած է եղել մտաւոր ընդունակութիւնների ժամանակաւոր շեղումին:

Արդեօք խելագարութեան վերագրելը չափազանցութեան չէ հասել: Արդեօք նա զէնք չէ դարձել անբարեխիղճների ձեռքին:

Վերջին ժամանակներս ամենայն մի սպանող այնպէս է դուրս բերւում, որ եղեռնագործութիւնը կատարելուց առաջ՝ իբր թէ նա եղել է խելագարութեան ենթակայ:

Բաւական է, որ յանցաւորը խօսք բաց անի աստղների մասին, իսկոյն վճռում են, որ նա խելագար է: Եթէ նա լաց եղաւ իւր վիճակի վերայ, բարեկամները զլուխները թափ են տալիս մի տեսակ երկիւղով, որով ուզում են ասել, թէ ռբանը վատ է, խելքը կարծես տեղումը չէ: Եթէ յանցաւորը սպանութիւնից յետոյ շփոթւած է լինում, կասկածոտ և անհանգիստ, նա առանց այլ և այլութեան դատւում է խելագարների շարքում:

Իսկն ասած՝ մեզ հարկաւոր են օրէնքներ ոչ թէ յանցանքների դէմ, այլ մի յատուկ օրէնք խելագարութեան դէմ: Ահա ուր է իսկական չարիքը:

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՎԵՊ

I

ԳԱՂՏՆԻՔԻ ԲԱՆԱԼԻՆ

Գիշեր էր: Մեծ վաղեմի աւատական ամրոցում խաղաղութիւն էր տիրում: Վերջանում էր 1222 թ.: Ամրոցի ամենաբարձր աշտարակներից մէկի ծայրում միայնակ մի լոյս էր վառւում: Այդտեղ այդ պահուն կատարւում էր ընտանեկան գաղտնի մի խորհուրդ: Խստաբարոյ հին բարոն Կլիգենշտայնը նստած էր բազկաթոռի վերայ, խորասուզւած մտածմունքների մէջ: Յանկարծ նա քնքոյշ ձայնով ասաց.

— Սիրելի աղջիկս:

Մի ազնիւ կերպարանքով երիտասարդ, որ հագած էր ոտնից մինչև գլուխ ասպետական զգեստ, պատասխանեց.

— Ի՞նչ է, հայրիկ:

— Սիրելի աղջիկս, հասել է ժամը, որ ես պէտք է բանամ այն գաղտնիքը, որ վրդովել է քո մատաղ կեանքը: Թող յայտնի լինի քեզ, որ այդ գաղտնիքի արմատը գտնւում է այն հանգամանքներում, որոնք

ես քեզ այժմ կը բացատրեմ: Իմ Ուլրիխ եղբայրս Բրանդենբուրգեան դուքսն է: Իմ հայրը մահաւան անկողնում կտակեց, որ եթէ Ուլրիխը որդի չունենայ, թագաւորական գահը պէտք է անցնի իմ սերունդիս՝ այն ենթադրութեամբ, որ ես որդի կ'ունենամ: Իսկ եթէ մեզնից ոչ մէկը որդի չի ունենալ, այլ միայն աղջիկներ, գահը կը մնայ Ուլրիխի աղջկանը՝ եթէ միայն նա անբիծ բարոյականութեան տէր լինի: Հակառակ դէպքում՝ պէտք է ժառանգի իմ աղջիկը, եթէ նոյնպէս անարատ անուն պահպանի: Ուստի ես և իմ պառաւ կինս քերմեռանդ սրտով շատ ենք աղօթել, որ Ամենակարողը պարգևի մեզ արու գաւակ: Բայց մեր աղօթքները չը լաւեցին: Մնեցիր դու մեզ զաւակ: Ես յուսահատուած էի. ես տեսնում էի, որ թանդագին գանձը իմ ձեռքից դուրս է գալիս, դիւթական ցնորքը իբրեւ մի ծուխ կորչում է: Իսկ ես ինչպէ՛ս մեծ յոյսեր ունէի: Ուլրիխ եղբայրս հինգ տարի վայելել էր ամուսնական կեանք. բայց դեռ չէր ունեցել իւր կնոջից ո'չ արու և ո'չ էգ ժառանգ:

«Սակայն ես շուտով հաշւեցի, որ դեռ բոլորը կորած չէ: Իմ գլխում ծագեց հետեւեալ փրկակար ծրագիրը: Դու ծնեցիր կէս զիշերին: Միայն բժիշկը, դայեակը և վեց աղախինները գիտէին քո սեռը: Մի ժամ էլ չանցաւ, որ ես նոցա բոլորին էլ կախել տւի: Հետեւեալ առաւօտը բոլոր բարոնները իմանալով, որ ինձ որդի է ծնւել, որ պէտք է ժառանգ դառնայ

Բրանդենբուրգեան դքսութեան, ուրախութիւնից խելքները կորցնում էին: Գաղտնիքը պահւում էր շատ խիստ կերպով: Քո մօրաքոյրը դարձաւ քո դայեակը և այնուհետեւ այլ ևս ոչինչ վախենալու տեղիք չունէինք:

«Երբ որ քո ինն տարին լրացաւ, Ուլրիխին էլ աղջիկ ծնւեց: Մենք տրտմեցինք և թէև սկսեցինք մեզ մխիթարել նորանով, որ կարմրուկը, ծաղիկը, բժիշկները և ուրիշ մանկապան աղէտները իրանց անելիքը կանեն, բայց միշտ էլ յուսախաբւում էինք: Աղջիկը ապրում էր և մեծանում կարգին... Բայց ի՞նչ ենք շատ հոգս անում: Մի՞թէ դու մեր որդին չես. մի՞թէ մեր սիրելի Կոնրադը չէ ապագայ դուքսը: Քեզ՝ չը նայելով, որ քսանեութ տարեկան աղջիկ ես, սիրելիս, երբէք ուրիշ անուն չենք տւել, այլ միայն Կոնրադ:

Այժմ հասել է այնպիսի ժամանակ, որ եղբայրս ուժասպառ է դառնում և իրան թոյլ է զգում: Պետական հոգսերը նորան չափազանց յոգնեցնում են, ուստի նա ցանկանում է, որ դու զնաս նորա մօտ և իրապէս դառնաս դուքս, թէկուզ այդ անունը դեռ ստացած չը լինես: Ծառաներ քեզ համար պատրաստ են. հէնց այսօր երեկոյեան ճանապարհ ընկի՛ր:

Բայց լաւ լսիր ասածներս և մտքումդ պահիր իւրաքանչիւր խօսքս: Մեզանում մի օրէնք կայ, որ նոյնքան հին է, որքան ինքը Գերմանիան, որ եթէ մի որ և է կին բազմի դուքսական գահի վերայ, թէ-

կուզ մի վայրկեան, նախ՝ քան հրապարակապէս օծելիլ ժողովրդի առաջ — նա ենթարկուեմ է մահւան պատժի: Զը մոռանաս այս նախազգուշութիւնը: Մի՛ դուրս գալ խոհեմութեան սահմաններից, քո վճիռները յայտնիր նախարարական աթոռից, որ գտնուում է զահի ստորոտում: Այդպէս եղի՛ր մինչև օծելից և բոլորովին ապահովանալի: Թէև դժւար հաւատալի է, որ երբ և իցէ քո սեռը իմացւի, բայց և այնպէս պէտք է իմաստնաբար վարեա այս խաբուսիկ և խորամանկ կեանքում, զգոյշ տանելով գործերդ:

— Ոհ հայր: Մի՞թէ այդ պատճառով իմ կեանքը եղել է մի խարդախութիւն: Մի՞թէ կեանքիս միակ կոչումն է եղել իմ քրոջը նորա բարձր իրաւունքներից զրկել: Խնայի՛ր ինձ, հայր, խնայի՛ր քո հարազատ զաւակին:

— Ի՞նչ, չարածճի: Իմ քեզ թագ տալու փոխարէն՝ ա՛յդ ես ինձ պարգև ապլիս: Հօրս գերեզմանով երդուում եմ, որ քո արտասուքը իմ ուրախութեան սաղ չի գալիս: Իսկոյն ճանապարհ ընկիր դուքսի մօտ գնալու և Աստուած մի արասցէ իմ նախազիծներիս դու դէմ գնաս:

Բայց, ընթերցող, վերջ տանք այս բացատրութիւններին: Բաւական է ասեմ, որ ազնիւ և համակրելի օրիորդի ոչ աղաչանքը, ոչ համոզելը և ոչ արտասուքը մի լաւ հետեւանքի չը հասցրին: Ոչ մի բան աշխարհքումս չէր կարող տեղից շարժել յամառ ծեր բարոն Կլիւզենշտայնին: Ի՞նչ անէր աղջիկը՝

Տրտում սրտով՝ նա դուրս եկաւ ամրոցի դռներից, մութ զիշերով, շրջապատւած զինւած իշխանների ապետական գնդով և ծառաների մի փաջլուն խմբով:

Աղջկայ գնալուց յետոյ՝ ծեր բարոնը նստել էր լուռ մի քանի ժամանակ և յետոյ դարձաւ իւր կնոջը հետևեալ խօսքերով՝

— Հանգամանքները մեզ համար լաւ են յարմարւում: Ահա արդէն երեք ամիս է անցել այն օրից, որ ուղարկել եմ ճարպիկ և գեղեցկադէմ կոմս Դեցինին իմ եղբօրս աղջկայ մօտ, Կոնստանցիայի մօտ, մի երկիւղալի յանձնարարութիւնով: Եթէ նորա գործը չը յաջողւի, մեր բանը շատ էլ լաւ չի լինիլ: Իսկ եթէ յաջողւի, այն ժամանակ ոչ մի ոյժ չի կարող այլ ևս արգելք լինել, որ մեր աղջիկը դքսուհի ճանաչւի, եթէ մինչև անգամ չար բաղդը նորան վճռած լինէր երբէք դուքս չը լինելու:

— Իմ սիրտը, նկատեց կինը, մուսլ նախազացումներից սաստիկ նեղանում է... բայց դեռ կարող է լաւ լինել:

— Դէհ, հոգս մի անիլ, սիրելի ամուսինս: Թող ազոռաները, ինչքան ուզում են, այժմ կրկւան: Գնանք քնելու և երազելու Բրանդենբուրգի և մեր ապագայ մեծութեան մասին:

II

ՅՆԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱՍՈՒՆՔՆԵՐ

Նախորդ գլխում պատմած դէպքից վեց օր յետոյ՝ Բրանդենբուրգի տէրութեան փառաւոր մայրաքաղաքը փայլում էր ռազմական շքեղութիւնով և թնդում էր հաւատարիմ ժողովրդի ուրախ աղաղակներէից։ Քաղաքը և ժողովուրդը տօնում էին երիտասարդ Կոնրադի, իբրև թագաժառանգի, գալուստը։

Ծերունի դուքսի սիրտը լքցւած էր ցնծութեան զգացմունքով, որովհետև Կոնրադի գեղեցիկ դէմքը և նուրբ շարժողութիւնները առաջին անգամից իսկ գրաւեցին ծերունու սիրտը։

Պալատի ընդարձակ դահլիճներում խռնւած էին պալատականները և զմայլւած ողջունում էին Կոնրադին։ Բոլոր շրջապատողներից բուրում էր մի այնպիսի ուրախութիւն և երջանկութիւն, որ Կոնրադի տրտմութիւնը և երկիւղները փարատեցին և անվրդով բաւականութեան զգացմունքի փոխեցին։

Բայց պալատի հեռու օթեաններից մէկում տեղի ունէր մի բոլորովին ուրիշ տեսարան։ Լուսամուտի մօտ կանգնած էր դուքսի միակ աղջիկը, դքսուհի Կոնստանցիան։ Նորա աչքերը կարմրած էին և ուռած և աղի արտասուք էին թափում։ Օրիորդը միայնակ էր։ Յանկարծ նա սկսեց հեկեկալ և բարձրաձայն արտասանեց՝

— Խարդախ Դեցի՛ն. նա ինձ խաբեց. փախաւ և հրաժարեց դքսութեան տիրոջոցից։ Առաջ ես չէի հաւատում նորա զնալուն. բայց այժմ, աւաղ, կասկածել անկարելի է։ Օ՛հ, իսկ ես ինչպէս սաստիկ, ինչպէս խելագար կերպով, նորան սիրում էի։ Ես սիրոս նորան տւի, թէև հաստատ զիտէի, որ իմ հայրը, դուքսը, երբէք համաձայն չի լինիլ՝ ինձ մարդու տալ նորան։ Այո, ես նորան սիրում էի. իսկ այժմ... այժմ ատում եմ։ Այո՛, ատում եմ հոգուս խորքից։ Ո՛հ, Տէր Աստուած, ի՞նչ պէտք է լինի իմ վիճակը։ Ես կորաց, անդարձ կորաց։ Ես կը խելագարեմ։

III

ԳՈՐԾԸ ԲԱՐԴԻՈՒՄ Է

Անցան մի քանի ամիսներ։ Բոլոր հպատակները միաձայն գովում էին երիտասարդ Կոնրադի կառավարչութեան ընդունակութիւնը և փառաբանում էին նորա դատավարական իմաստութիւնը, նորա զթառատ վճիռները և այն մեծ համեստութիւնը, որ նա ցոյց էր տալիս իւր այդ բարձր զիրքում։

Ծերունի դուքսը շուտով յանձնեց նորան բոլոր գործերը և վերին խորհրդում նստում էր ինքը առանձնակի և հպարտ ինքնագոհութեամբ լսում էր, թէ ինչպէս է նորա ժառանգը առաջին նախարարի աթոռից դատավճիռներ կարդում դուքսի անունով։

Շատ պարզ էր, ի հարկէ, որ մի այդպիսի սիր-
ւած մարդ, ինչպէս Կոնրադն էր, որ փառաբանւած
էր ամենից և շրջապատւած էր անհամեմատ աւելի
մեծ յարգանքով, քան միւս մեծամեծները, — պէտք
է իրան երջանիկ զգար: Բայց — զարմանալի բան —
նա երջանկութիւն չէր իմանում: Եւ զիտէք ինչո՞ւ:
Որովհետեւ նա նկատեց, որ դքսուհի Կոնստանցիան
սկսել էր նորա վերայ սիրահարւել: Բոլոր մնացած
աշխարհի սէրը նորա համար ուրախութիւն էր, իսկ
սա — միայն վտանգ էր սպառնում: Բացի այդ՝ նա
նկատեց, որ ծերունի դուքսն էլ արդէն գուշակել է
իւր աղջկայ զգացմունքները և արդէն մտածում էր
ամուսնացնելու մասին: Կոնստանցիայի տխրութիւնը
օրեցօր նւազում էր, նորա աչքերում սկսում է
յոյսը և վերակենդանութիւնը ցոլալ աւելի և աւելի
և նորա վաղուց ժպիտը կորցրած շրթունքներում
սկսում էր խաղալ ուրախութիւնը:

Կոնրադը զլուխը կորցրեց: Նա անիծում էր
իրան, թէ ինչու նա անձնատուր լինելով իւր բնա-
կան հակումներին, սկսեց մօտենալ իւր սեռակից
անձին: Նա ցանկացել էր այդ ընկերութեան մէջ իւր
տխուր, տաղտկալի ժամերը մոռանալ. բայց անսպա-
սելի վտանգ առաջացաւ զորանից:

Այժմ նա սկսեց իրան հեռու պահել իւր հօ-
բեղբոր աղջկանից: Բայց այդ հանգամանքը աւելի
վատացրեց բանը, որովհետեւ, որչափ նա հեռու էր
փախչում, այնքան աւելի Կոնստանցիան նորան աշ-

խատում էր հանդիպել: Առաջ Կոնրադը զարմա-
նում էր այդ բանի վերայ, բայց յետոյ սկսեց վրդով-
մունքի մէջ ընկնել: Աղջիկը նորան կատարելապէս
հալածում էր, նորան հեռուում էր, աշխատում էր
նորա մօտը լինել ամեն ժամ և ամենուրեք, օր ու
գիշեր: Բայց աղջիկը աւելի էր անհանգիստ, քան
կարելի էր կարծել: Մի գաղտնիք կար, որ դեռ ոչ
ոքի յայտնի չէր:

Այսպիսի յարաբերութիւններ երկայն շարունակ-
ւել չէին կարող: Բոլոր շրջապատողները նկատում էին
և միմեանց ականջին քշփւում էին: Մերունի դուքսը
սկսեց անհանգստանալ: Խեղճ Կոնրադը երկիւղից
իրան կորցրել էր և մի սուէրի էր նմանում:

Մի անգամ, երբ Կոնրադը դուրս էր գալիս իւր
սենեակից, որ գտնուում էր կից պատկերազարդ դահ-
լիճին, Կոնստանցիան նորան հանդիպեց և բռնելով
նորա ձեռքը, բացականչեց՝

— Անգութ, ինչո՞ւ էք դուք ինձնից փախչում:
Ես ինչ եմ ձեզ արել, կամ ասել, որ կորցրել եմ ձեռ
նախկին բարեկամութիւնը, որ ունէիք դէպի ինձ:
Կոնրադ, ինձ միք ատի՛ւ, այլ խղճացէք իմ տան-
ջած սիրոս: Ես քեզ սիրում եմ, Կոնրադ: Այժմ ու-
զում ես՝ ինձ ատիր, բայց իմ խօսքը արդէն ասել
է, իմ բերանից թո՛ւել է:

Բայց Կոնրադը մնաց համր, ինչպէս մի փայտ:
Կոնստանցիան մի րոպէ տատանմունքի մէջ կանգնած
նայում էր, յետոյ իւր կերպ բացատրելով Կոնրադի

լուծութիւնը, յանկարծ փայլեց վայրենի ուրախութիւնով և փարելով Կոնրադի վզին, ասաց՝

— Դու համաձայն ես, դու հաւանում ես: Դու կարող ես ինձ սիրել, դու ինձ սիրելու ես: Ախ, ասա, դու ի՞նչ ես լինելու, ի՞մը, սիրելի Կոնրադ:

Կոնրադը մի ծանր հոգոց հանեց: Նորա երեսը հիւանդոտ գունատութիւն ստացաւ և նա սկսեց դողալ, ինչպէս աշնան ծառի տերև: Վերջապէս, յուսահատ կերպով մերժեց խեղճ աղջկան հետեւալ խօսքերով.

— Դուք չը դիտէք, ինչ էք պահանջում: Դա երբէք, երբէք կարելի բան չէ...

— Եւ ինքը փախաւ, ինչպէս մի յանցաւոր, թողնելով դքսուհուն մեծ զարմանքի մէջ: Մի րոպէ անցած Կոնստանցիան սկսեց լալ և հեկեկալ իւր եղած տեղում: Իսկ Կոնրադը նոյնը անում էր իւր սենեակում: Երկուսն էլ յուսահատուած էին: Երկուսն էլ տեսնում էին, որ շուտով գաղտնիքները բացւելու են վտանգաւոր կերպով:

Կոնստանցիան փոքր առ փոքր ուշքի եկաւ, զրսուեց և ինքն իրան այս մտածմունքներին եկաւ:

— Ի՞նչպէս ես դիմանամ, երբ տեսնում եմ, որ այն րոպէին, երբ ես կարծում էի, թէ իմ սէրը հալեցրել է նորա սառցապատ սիրտը, նա արհամարհում է իմ զգացմունքը: Ես նորան ատում եմ: Նա ինձ դէն հրեց: Նա, սիրածը, դէնը չարտեց ինձ, ինչպէս ոտքով քշում են շանը:

IV

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐ

Ժամանակը անցնում էր: Բարի դուքսը կրկին վշտերի մէջ ընկաւ: Կոնստանցիային և Կոնրադին այլ ևս միասին տեսնող չէր լինում: Դուքսը մտաւորապէս մեռած էր:

Ամենակարող ժամանակը կամաց-կամաց վերադարձրեց Կոնրադին նորա թշերի կարմրութիւնը, նորա հայեացքի զարթութիւնը և նա շարունակում էր զեկավարել բարձր կառավարութեան գործերը լուսաւոր, անդադար ամրացող խելքով:

Յանկարծ մի օտարոտի քչփչոց սկսեց տարածւել պալատից դուրս: Նա քանի գնում էր մեծանում էր և բարձրաձայն դառնում: Քաղաքի բամբաստէրները արդէն էլ ձեռք չէին քաշում և ասէկոսէներին մեկնութիւններ էին տալիս: Լուրը ծայրէ ի ծայր անցաւ բոլոր դքսութիւնը: Իսկ լուրը ահա ինչ էր.

«Դքսուհի Կոնստանցիան երեխայ է ծնել:»

Երբ որ Կոնրադի հայրը, բարոն Կլիւզենշտայնը իմացաւ այս լուրը, նա երեք անգամ շարժեց իւր փետրազարդ սաղաւարթը և բացականչեց:

— Կեցցէ դուքս Կոնրադը: Այսուհետեւ թագը նորա վերայ ապահովւած է: Դեցինը—ապրի. նա իւր յանձնարարութիւնը լաւ կատարեց և թշաւաւ կանը արժանի է իւր վարձատրութեան:

Եւ նա տարածեց այս լուրը ամեն կողմ: Եւ քառասունութ ժամից յետոյ նորա կալածների բոլոր ժողովուրդը պարում էր և երգում և, ի պատիւ այդ մեծ գործի, կազմեց ճրագալոյց... այդ բոլորը գոռոզ և երջանիկ բարոն Կլիգենշտայնի հաշւով:

V

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԱՂԵՏ

Պէտք է մեծ դատաստան լինէր: Բրանդենբուրգի բոլոր իշխանները և բարոնները ժողոված էին դուքսի պալատի դատաստանական ատենանը: Բոլոր տեղերը, որտեղ կարելի էր նստել կամ կանգնել, բռնւած էին:

Կոնրադը—հագած բոտրագոյն ծիրանին սպիտակ աքիսաորթ շրջանակով—նստած էր աւագ նախարարի աթոռի վերայ, իսկ նորա երկու կողմից տեղաւորել էին պետութեան ծայրագոյն դատաւորները:

Ծերունի դուքսը խիստ հրամայել էր, որ իւր աղջկայ դատաստանը կատարւի առանց կողմնապահութեան, իսկ ինքը՝ սրտի վշտից անկողին պառկեց: Նորա օրերը հաշւած էին: Խեղճ Կոնրադը շատ խնդրեց, որ նորան ազատեն մի այնպիսի դատաստանից, որտեղ պէտք է քննւի նորա հօրեղբոր աղջկայ յանցանքը. բայց նորա աղաչանքը իզուր անցաւ:

Այդ բոլոր բազմամարդ ամբոխի մէջ ամենափշտալի սիրտը—Կոնրադինն էր. իսկ ամենաուրախը—

նորա հօրը: Հայրը՝ աղջկանից զաղանի՝ եկել էր կանգնել և սպասում էր իւր տան վիճակւած ուրախութիւնը տեսնելու:

Երբ հարկաւոր յայտարարութիւնը արին և բոլոր պահանջող ձեւականութիւնները կատարեցին, դատաստանի մեծ նախագահը արտասանեց.

—Յանցաւոր, ոտքի կանգնի՛ր:

Դժբաղդ դքսուհին վերկացաւ և կանգնեց առանց քողի ահագին ամբոխի առաջ: Նախագահը շարունակեց.

—Օգոստափառ դքսուհի, մեր տէրութեան մեծ դատաւորների առաջ յայտարարւած է և ապացուցւած, որ ձեր բարձրութիւնը ամուսնական սուրբ կապից դուրս երեսայ էք ծնել, որի համար մեր երկրի հին օրէնքը սահմանել է մահւան պատիժ, եթէ միայն նորին բարձրութիւնը, մեզ կառավարող դուքսը և հրամայող բարի Կոնրադը չեն ներիւնք ձեզ բարձրագոյն վճռով: Յանձնեցէ՛ք ձեզ նորա զթաքըրտութեան:

Կոնրադը դողալով մեկնեց զաւազանը: Այդ վայրկեանին նորա կանացի սիրտը լքցւեց կարեկցութիւնով դէպի չարաբաղդ յանցաւորը և նորա աչքերում երևացին արտասուներներ: Նա արդէն ուզում էր բերանը բանալ և խօսել, երբ դատաստանի նախագահը շտապով յայտնեց նորան.

—Ոչ այստեղ, ոչ այստեղ, ձերդ բարձրութիւն: Օրէնքը պահանջում է, որ դքսի տան անդամները

դատաւճիռ կարգալը, ում և վերաբերելիս լինի, կատարեն գահի բարձրութիւնից:

Սարսափը պատեց խեղճ Կոնրադի սիրտը — և նորա հօր երկաթեայ մարմնով անցաւ մի սարսուռ: Եւ ահա ինչու:

Կոնրադը չէր թագադրւած: Այդ վարմունքով նա ուրեմն պէտք է խաչտառակէր գահը: Նա տատանւում էր և երկիւղից գունատւում: Բայց պէտք էր ծիսակատարութիւնը պահպանել: Կոնրադի վերայ էին դարձրած շրջապատողների զարմացած հայեացքները: Եթէ նա շարունակի տատանել՝ այդ հայեացքները կասկածաւոր կը դառնան: Նա բարձրացաւ գահի վերայ. առաջ մեկնեց իւր գաւազանը և արտասանեց.

— Յանցաւոր: Մեր օգոստոսիառ Տէր, Ուլրիխի, Բրանդենբուրգեան դուքսի անունով՝ ես կատարում եմ ինձ վերայ դրած բարձր պարտականութիւնը: Ուշադրութեամբ լսեցէ՛ք իմ խօսքերը: Մեր հայրենիքի հին օրէնքով, եթէ դուք կը թագցնէք ձեր յանցանքի գործակցին և չէք չաչտնիլ դատաստանին, դուք անխուսափելի կերպով կ'ենթարկէք մահաւան պատժի: Զիջեցէ՛ք այս սպառնալիքին և ազատեցէ՛ք ձեզ քանի ուշ չէ: Յաչոնեցէք ձեր երեխայի հօր անունը:

Քոյր ժողովականներին աիրեց մի այնպիսի խոր լռութիւն, որ կարելի էր կարծես սրտերի բաբախումը լսել: Այդ ժամանակ դքսուհին հանդարտ շարժեց իւր աչքերը ատելութիւնով, և մատը ուղղելով դէպի Կոնրադը, ասաց:

— Ահա այս մարդն է:

Կոնրադին սպառնացող սարսափելի վտանգը, որի դէմ առնելու համար նա միջոց և յոյս չուներ, նորա վերայ այնպէս մի սառն դող բերաւ, որ կարծես մահաւան պաղութիւնն էր:

Ի՞նչ երկրային ոյժ կարող է այժմ նորան փրկել:

Մեղադրանքը հերքելու համար, նա պէտք է իրան մատնի, որ նա կին է. իսկ չը թագադրւած կնոջ, որ յանդգնել է բարձրանալ դքսական գահը — սպասում է պատիժ: Մի վայրկեանում Կոնրադը և նորա կատաղի ծեր հայրը ուշքից գնացին և գետնին զարկեցին:

Այս սարսափելի, խճճւած վէպի վերջը չի կարելի գտնել ո՛չ այս, ո՛չ մի որ և է ուրիշ գրքում, ո՛չ այժմ, ո՛չ երբ և իցէ ապագայում:

Բանն այն է, որ ես իմ հերոսիս (կամ հերոսուհուս) դրել եմ մի այնպիսի բացառիկ կամ անել դրութեան մէջ, որ էլ չը գիտեմ թէ ինչպէս կարող եմ նորան հանել այդ դժւարութիւններից, և ուստի զերազատում եմ ձեռքերս լւանալ այս գործում և թողնել զոհին (այսինքն հերոսիս, կամ հերոսուհուս), որ նա ինքը դուրս պրծնի, կամ մնայ էլի այնտեղ, ինչպէս ինքը կը ցանկանայ: Ի հարկէ՝ սկզբում ես կարծում էի թէ այս փոքրիկ դժւարութիւնը ես հեշտ կը յաղթեմ. բայց բանը ուրիշ կերպ դուրս եկաւ:

ԽՐԱՏԱԿԱՆ ՄԻ ՏԵՍԱԿ ԱՌԱՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մանկութիւնիցս սկսած՝ ես սիրում էի կարգալ մի տեսակ խրատական առակներ, որոնց մէջ գտնում էի սրտիս համար բաւականութիւն և որոնցից քաղում էի կեանքի համար օրինակներ:

Այդ առակները միշտ ձեռաց էի պահում և ամեն անգամ, երբ վատ մտքեր էին իմ մէջ յղանում իմ մի որ և է մերձաւորի նկատմամբ, ես նորանց էի դիմում և նոքա քշում, ցրում էին յանցաւոր մտածողութիւնս: Երբ ես զգում էի ինձ ետասէր, ժլատ և անազնիւ, դիմում էի կրկին առակներին, և նոքա նորից հաղորդում էին ինձ վեհ արամադրութիւն:

Բայց շատ անգամ իմ մէջ ցանկութիւն է երեւացել, որ այդ արիւնահեղ առակները չը կտրւեն բարեցաձող տեղում, այլ շարունակած լինեն մինչև վերջ բարերարութեան ամբողջ պատմութիւնը բոլոր հետեւանքներով: Այդ ցանկութիւնը ժամանակով այնքան մեծացաւ իմ սրտում, որ վերջապէս վճռեցի՝ ես ինքս գտնեմ նոցա համար շարունակութիւններ: Ես եռանդով սկսեցի դործը առաջ տանել և մեծ

նեղութիւնից ու բազմաշխատ հետախուզութիւններից յետոյ իրագործեցի մտադրութիւնս:

Այժմ կաշխատեմ ներկայացնել ձեզ իմ աշխատանքի հետեւանքները, ղետեղելով առանձին-առանձին առակները և աւելացնելով նորանց այն շարունակութիւնները, որոնք՝ իմ հետազօտութիւններից յետոյ՝ ես գտել եմ պատշաճաւոր:

I

ԵՐԱՆՏԱԳԷՏ ՇՈՒՆԸ

Մի անգամ, մի բարեսիրտ բժիշկ (որ բարոյագիտական գրքերի սիրահար էր) տեսաւ փողոցում թափառող մի շուն՝ տանջւելիս կոտրած ոտի ցաւից: Բժիշկը տարաւ խղճալի արարածին իւր տունը, զրստեց ու կապեց նորա ցաւած ոտը և կրկին արձակեց փողոց:

Բժիշկը համարեա մոռացել էր իւր արած բարերարութեան մասին, երբ մի քանի օրից յետոյ, առաւօտեան, դաւթի դուռը բացելուց՝ տեսաւ շնորհակալ շանը՝ կանգնած մի ուրիշ թափառական շան հետ, որի ոտը նոյնպէս կոտրած էր մի ինչ որ պատճառից: Բարեսիրտ բժիշկը իսկոյն օգնեց խեղճ կենդանուն, ըստ որում հիացաւ նախախնամութեան անհասազգեցութեան վերայ, որով երախտագիտութեան շնորհքը արտափայլում է մինչև անգամ մի շան մէջ...

ՇԱՐԻՆԱԿԱՆԻՔ

Միւս օր առաւօտեան բժիշկը տեսաւ իւր դռան առաջ երկու առողջ, շնորհակալ դէմքով, շներ և նոցա հետ դարձեալ երկու կաղ շներ: Բժիշկը սորանց ևս օգնեց և չորս շները գնացին իրանց ճանապարհը՝ թողնելով բժշկին հիացած և հոգեզմայլ դրութեան մէջ: Հետեւեալ առաւօտը բժշկի դռանը կանգնած էին չորս առողջացած շները և նոցա հետ կրկին մի չորս հիւանդներ, որոնց վերայ բժիշկը դրեց նոյն խնամքը: Միւս առաւօտը բժշկի դռանը հաւաքւել էին արդէն տասնեւեց շուն, որոնցից կէսը նոր կաղացածներ էին: Բժիշկը մինչև կէսօր հազիւ կարողացաւ բոլորի ոտներն էլ ուղղել. բայց նորա հոգեզմայլ տրամադրութեանը սկսեց խառնուել մի տեսակ ծանրութիւն: Հետեւեալ առաւօտեան արեգակը ծագեց՝ լուսաւորելու բժշկի դռան առաջ արդէն երեսներկու շան, որոնցից տասնեւեցը նոր կաղացածներ էին: Սոքա բռնել էին բոլոր մալթը և փողոցի կէս լայնքը, իսկ հետաքրքիր ամբոխը նայում էր այդ տեսարանին:

Կաղ շների ոռնոցը, բժշկւածների ուրախ ձիւրը, դատարկապորանների ասեկոսէները տալիս էին տեսարանին մեծութիւն և վեհութիւն: Փողոցում անցուդարձը դադարել էր:

Բարեգործ բժիշկը հրաւիրեց իւր հաշուով մի քանի ոսկոր գձողներ օգնութեան և հազիւ կարողացաւ մինչև մութն ընկնելը վերջացնել իւր բարի գործը:

Բայց ամեն բան ունի իւր չափը, իւր սահմանը: Երբ լուսացաւ հետեւեալ առաւօտը և բարի բժիշկը՝ տեսաւ նորից հաւաքւած ցաւազար շների անվերջ շարքը, նա բացականչեց:

— Պէտք է վերջապէս խոստովանեմ, որ ինձ խաբել և յիմարացրել են բարոյախօսական գրքերը, որոնց մէջ ցոյց է տրւած ամեն բանի միայն երեսը և թագցրած է աստառը: Տուէ՛ք ինձ իմ հրացանը, չէ, շատ է վատացել դրութիւնս:

Ձեռքին բռնած հրացանը՝ նա դուրս վազեց շէմքը և յանկարծ պատահտեար կոխեց ամենաառաջին անգամ բժշկած շան ազին: Շունը իսկոյն բռնեց բժշկի ոտքից և խածեց: Շունը, որ հիացել էր իրան արած բարութիւնից, այնպէս մի ողւորութիւն էր ստացել, որ սկսել էր ցնորքների մէջ ընկնել և վերջապէս կատաղել էր:

Մի ամսից յետոյ, երբ բարեգործ բժիշկը տանջւում էր ջրալախի արհաւիրքներից, նա ժողովեց իւր տրտում բարեկամներին և յայտնեց հետեւեալ կտակը.

— Զգոյշ կացէ՛ք բարոյախօսական գրքերից: Նոքա յայտնում են իրողութեան միայն կէսը: Երբ որ ձեզ դիմելու լինի փուչ-կենդանուն մէկը օգնութեան, իսկ դուք կասկածում լինէք ձեր արածի հետեւանքների մասին, զգուշացէ՛ք առաջւանից և ինքներդ սպանեցէք այդ տեսակ տաւարին:

Վերջացնելով այս խօսքերը, բարեգործը շուռ եկաւ դէպի պատը և աւանդեց հոգին:

II

ԲԱՐԵԳՈՐԾ ՀԵՂԻՆԱԿԸ

Մի չքաւոր պատանի գրող շատ էր աշխատում տպել տալ իւր յօդաւածները, բայց ի գուր. օրագիրները չէին ընդունում խեղճի գրւածները: Վերջապէս տանջւած զրկանքներից և քաղցածութիւնից, նա վճռեց պատմել իւր դրութեան մասին մի յայտնի հեղինակի և խնդրեց նորա հովանաւորութիւնը: Այս բարեհոգի մարդը իսկոյն թողեց իւր սեփական գործը և սկսեց թերթել պատանու յետ ստացած ձեռագիրները:

Վերջացնելով ընթերցանութիւնը՝ նա սեղմեց պատանու ձեռքը բարեկամաբար և ասաց.

— Ձեր աշխատանքը առանց արժանաւորութիւնների չէ. եկէ՛ք ինձ մօտ երկուշաբթի օրը, բան ունեմ ասելու:

Երբ նշանակած օրը պատանին եկաւ, երեւելի հեղինակը՝ Ժպիտը բերանին, առանց մի խօսք ասելու, բացեց ամսագրի նոր հրատարակւած համարը և զրեց պատանու առաջ: Պատանին, երբ տեսաւ իւր յօդաւածը տպւած, հիացմունքից չը գիտէր, ինչ անէր:

— Խնչով, աղաղակեց նա, չոքելով և արտասւելով, ի՞նչով կարող եմ ես երբ և իցէ յայտնել ձեզ իմ անչափ շնորհակալութիւնը:

Այս դէպքը թող ուսուցանի մեզ ուշադիր լինելու նոր գրական ոյժերին, որոնք կարօտ են մեր օգնութեան:

Շարունակութիւն

Մի շաբաթից յետոյ պատանին նորից եկաւ յայտնի գրողի մօտ արդէն հինգ չընդունւած ձեռագիրներով: Բարի մարդը այս այցելութեան վերայ փոքր ինչ զարմացաւ, որովհետեւ բարոյախօսական զրքերից նա յիշում էր, որ նոր գրողը կարօտ է միայն առաջին օգնութեան: Սակայն նա նայեց և այս ձեռագիրները: Ձնջելով անպէտք ճոռմաբանութիւնները և հանելով միջից աւելորդաբանութիւններով լքեցած ամբողջ թերթեր, նա այնքան ուղղեց, որ ձեռագիրներից երկուսը կարելի եղաւ տպագրութեան տալու:

Անցաւ մի երկու շաբաթ և շնորհակալ պատանին եկաւ՝ նոր բեռ հետը: Յայտնի հեղինակը, երբ առաջին անգամ կարողացաւ օգնել նոր ասպարէզ մտնողին, զգաց իւր կատարած լաւ գործի քաղցրութիւնը և մինչև անգամ համեմատեց իրան բարոյախօսական գրքերում պատահող բարեգործների հետ. բայց այժմ սկսում էր նկատել, որ սա բարեգործութեան մի նոր, օտարտի դէպք է: Նորա ոգևորութիւնը կորաւ: Այսու ամենայնիւ նա չը կարողացաւ մերժել պատանուն, որ այնպէս միամիտ սրտով և հաւատով դիմել էր նորա հովանաւորութեան: Հետևանքը՝ վերջ ամենայնի՝ այն եղաւ,

որ երեւելի հեղինակը տեսաւ իրան ծանրաբեռնուած նորափթիթ գրողի գրքերով: Նորա բոլոր ջանքերը շուտով աչքի անցնել երիտասարդ գրողի բոլոր արդիւնաբերութիւնը — ի դուր անցան:

Հովանաւորողը ստիպուած էր պատանուն ամեն օր խրատներ տալ, ուղղել, քաջալերել, միեւնոյն ժամանակը հոգալ, որ նորա գրւածները տպւեն, ուստի և կոկել նորա ձեռագիրները:

Երբ վերջապէս երիտասարդ գրողը հարթել էր իրան համար ճանապարհը, նա յանկարծ մեծ անուն ստացաւ, տպելով մի գիրք, ուր նկարագրուած էր երեւելի հեղինակի տնային կեանքը: Այդ գրքով սակայն պատանին խոր խոցեց իւր հովանաւորողի սիրտը, որովհետեւ նա իւր նկարագրութեան մէջ գործ էր ածում կծու ծաղր և հաղորդում էր ճշգրտութեամբ չը պատմւելիք մանրամասնութիւնները: Գիրքը ունեցաւ մեծ յաջողութիւն և սաստիկ տարածւեց: Երեւելի հեղինակը շատ տխրեց այս տմարդի վիրաւորանքից:

Ծանր հառաչելով նա ասաց.

— Աւաղ, գրքերը ինձ խաբեցին, նոքա չեն հաղորդում բարոյագիտական դէպքերի մանրամասնութիւնները: Զգուշացէ՛ք, բարեկամներս, նոր հեղինակներից: Ով անյայտութիւնից չի կարողանում դուրս գալ, նորան օգնելով՝ դուք մի շարիք էք պատրաստում ձեզ համար:

III

ՇՆՈՐՀԱԿԱՆ ԱՄՈՒՍԻՆԸ

Մի անգամ տիկին Մակսպարէնը գնում էր կառքով իւր փոքրիկ որդու հետ միասին քաղաքի մեծ փողոցով: Յանկարծ ձիերը խրոնեցին, կատաղի վազեցին և կառավարին վայր զցեցին: Իսկ մայր ու որդին սարսափած ֆնացել էին կառքում:

Յանկարծ մի երիտասարդ սալապան, տեսնելով այդ, թողեց իւր սալը, ընկաւ համարձակութեամբ ձիերի առաջը և կանգնեցրեց նորանց: Շնորհակալ տիկինը նշանակեց սալապանի թւահամարը և երբ տուն վերադարձաւ՝ պատմեց նորա քաջութեան մասին իւր ամուսնուն (որ ի դէպ ասել կարգում էր բարոյախօսական գրքեր):

Ամուսինը՝ լսելով պատմութիւնը՝ արտասուեց, փառք տւեց Ամենակալին, առանց որի կամքի մի ճնճղուկ անգամ չի ընկնում բունից, ուղարկեց քաջ սալապանի ետեւից և տալով նորան հինգ հարիւր դոլարի ստացական՝ ասաց.

— Առէ՛ք այս, պարոն Ֆերգիւսոն, իբրեւ վարձատրութիւն ձեր արած ազնիւ գործի համար և եթէ երբ և իցէ կարօտութիւն զգաք՝ քաջ իմացէք, որ ինձանում կը գտնէք երախտագէտ մի սիրտ:

Այս դէպքը մեզ սովորեցնում է, որ բարի գործը միշտ վարձատրում է նորա կատարողին, որչափ և աննշան լինէր սորա հասարակական դիրքը:

ՇԱՐԱԹԻՅԱՆ

Մի շարաթից յետոյ եկաւ սալապան Գերգիւսոնը
և խնդրեց պարոն Մաքսապալենից օգնելու նորան աւելի
յարմար պաշտօն ստանալու, որովհետեւ նորան արժանի
չէր, որ նա սալեր տանել բերելով զբաղէր։ Մաքսապա-
լենը աւելցնելով նորան զբաղարի պաշտօն լաւ ուժիկով։

Շուտով Գերգիւսոնի մայրը հիւանդացաւ և Գեր-
գիւսոնը... Որպէս զի չը ձանձրացնենք ընթերցողին,
յայտնենք մի անգամից, որ պարոն Մաքսապալենը
համաձայնեց ընդունելու նորան իւր տունը։ Մայրը
անդափովսեց. բայց սկսեց շատ տխրել իւր փոքրիկ
երեխաների կարօտից։ Ուստի հարկաւոր եղաւ, որ
փոքրիկ Մերին, Զուլիան և Հարաճճի Զիմին էլ
տուն բերեն։

Այս Զիմին ունէր մի զմեկի, որը ձեռքին նա
գնում է հիւրասենեակ և կտրատում է թանկագին
պաստաւները և փչացնում կահ կարասիքը։ Նրկու
օր էլ անցնելուց յետոյ յանկարծ ընկաւ սանդուխ-
քից, վիզը կտորեց և մեռաւ։ Քաղաւմին հաւաքել
էին մինչև տասնեօթ մարդ բարեկամներից։ Սոքա
բոլորը ծանօթացան տանտէրերի հետ և խնդրեցին
տանը պաշտօններ, որ և վերջապէս ստացան։

Գերգիւսոնները ձեռքն առին ամբողջ տունը։
Պառաւր յաճախ հարկում էր և այս ու այն կողմ
յիշոցներ թափում։ Բայց շնորհակալ Մաքսապալենները
իրանց պարտքն էին համարում նորան ուղղել, յիշե-
լով նորա որդու արած բարերարութիւնը։ Գերգիւ-

սոնը յաճախ տուն էր վազում, աշխատանք քիչ էր
բերում ընտանիքին և խնդրում էր, որ իւր համար
գտնէին աւելի հանգիստ և արդիւնաւէտ աեզ, որ
և յաջողեց ճարել Մակսապալենի շնորհիւ։ Բայց երբ
եկաւ ամառայ արձակուրդի ժամանակը՝ Գերգիւսոնը
սկսեց յամառ կերպով պահանջել, որ նորան ուղար-
կեն Ներսիս առողջութիւնը կազդուրելու համար։
Մաքսապալենը այդտեղ այլ ևս չը կարողացաւ համ-
բերել, բողբոջեց այդ անկոչ բռնաւորի դէմ և վճռա-
կան կերպով մերժեց։ Գերգիւսոնի մայրը այնպէս
զարմացաւ, որ օղու շիշը վալը դրեց ձեռքիցը, իսկ
նորա յիշոցախօս բերանը մի քանի րոպէ պապանձեց։
Փոքր ինչ յետոյ՝ երբ ուշքը վերան եկաւ՝ պառաւր
կատաղի կերպով գոռաց։

— Այդպէ՞ս է ձեր շնորհակալութիւնը։ Իսկ
մտածել էք արդեօք թէ որտեղ կը լինէին ձեր կիներ
և որդին, եթէ իմ որդու օգնութիւնը չը լինէր։

Գերգիւսոնն էլ վերայ հասաւ միևնոյն նախա-
տինքով։

— Այդպէ՞ս է ձեր երախտագիտութիւնը։ Դուք
մէկ սասցէ՛ք—եւ ազատե՛լ եմ ձեր կնոջ կեանքը
թէ ոչ։

Եօթն ազգականները վազեցին եկան խոհանոցից
և մէկը միւսից առաջ ընկնելով՝ նախատեցին։

— Հը՛, այդպէ՞ս է եղել ուրեմն ձեր շնորհակա-
լութիւնը։

Գերգիւսոնի քոյրերը զարմացական հայեացքով

սկսել էին նոյնպէս տրտնջալ և բերանները բացեցին նախատինք թափելու, բայց նոցա մայրը յանկարծ սկսեց լալ և բացականչեց:

— Մէկ մտածեցէ՛ք, որ մեր փոքրիկ Զիմին այս տանը կորցրեց իւր կեանքը:

Մաքսպաղենի զայրոյթը աւելի ևս սաստկացաւ և նա կատաղի կերպով գոռաց:

— Դուրս իմ տանիցը, մուրացկանների աղբ, դուրս: Ինձ խաբել էին գրքերը, բայց այսուհետեւ այդպէս բան այլ ևս չի կրկնուիլ. սա էլ բաւական է: Յետոյ՝ դիմելով Ֆերգիւսոնին՝ շեշտեց.

— Թէև չիրաւի դու ազատել ես կնոջս կեանքը. բայց ես չը սպանեմ տեղն ու տեղը ամեն մի անպիտանի, թէգուղ նա քեզանից էլ աւելին արած լինի:

Որովհետև ես քարոզիչ քահանայ չեմ. այդ պատճառով ներելի է, եթէ ես վերջումն եմ դնում վկայութիւնս՝ փոխանակ սկզբում բերելու: Ես նորան քաղում եմ «Նախագահ Լինկոլնի մասին յիշողութիւններ» գրքից:

«Հակեո ղերասանը Ֆալստաֆի դերում հիացնում էր Լինկոլնին: Երևելի նախագահը, ինչպէս յայտնի է, սիրում էր ուրիշներին հաղորդել իւր համակրութեան զգացմունքները. ուստի և Հակետին նա գրել էր մի սիրալիր փոքր տոմս, որի մէջ արտայայտել էր նորան՝ խաղից ստացած բաւականու-

թեան զգացմունքը: Հակետը՝ ի պատասխան այդ տոմսի՝ ուղարկում է մի գիրք՝ կարծեմ՝ իւր յօրինած: Յետոյ գրում է նախագահին մի քանի նամակներ: Մի անգամ, ես գնացել է նախագահի հրաւերով Սպիտակ Տան պալատը: Նախագահի սենեակը գնալուց ես պատահեցի Հակետին՝ նստած ընդունարանում՝ սպասող դրութեան մէջ: Նախագահը հարցրեց.

— Ոչ ոք չը կա՞յ ընդունարանում:

Երբ ես դրական պատասխան տւի և յայտնեցի Հակետի մասին, Լինկոլնը վրդովւած ասաց.

— Ա՛խ, ես չեմ կարող, ես չեմ ցանկանում տեսնել այդ պարոնին: Ես կարծում էի, նա արդէն գնացել է:

Յետոյ աւելացրեց,

— Այս հանգամանքը բնորոշ կերպով ապացուցանում է այդ շրջանի մարդկանց հետ բարեկամութիւն հաստատելու անյարմարութիւնը: Դուք գիտէք, թէ որչափ ես յարգում էի Հակետի դերասանական տաղանդը և գիտէք իմ նորան համակրական տոմս գրելը: Նա ուղարկեց ինձ այս գիրքը և ես կարծում էի թէ դորանով ամեն բան վերջացաւ: Նա լաւ դերասան է և լաւ անուն ունի: Եւ կարելի էր ենթադրել, որ իմ և նորա մէջ սկսած բարեկամական քայլը ոչ մի ուրիշ հետեանք չէր ունենալ: Բայց ի՞նչ էք կարծում, ի՞նչ է նա ինձնից ցանկանում:

Ես չը կարողացայ գուշակել Լինկոլնը շարունակեց.

— Նա ցանկանում է, մի խօսքով, ստանալ
դեսպանի պաշտօն Լոնդոնում: Տեսնո՞ւմ էք քաջին:


Վերջումը պէտք է յայտնեմ, որ Ֆերգիսոնի
մասին պատմածս իսկական դէպք է, որին ես ահա-
նատես եմ եղել: Նա միայն փոքր ինչ փոխել եմ
այստեղ մանրամասնութիւնները, որպէս զի Ֆերգիս-
ոնը չը ճանաչի:

Իմ ընթերցողներից իւրաքանչիւրը իւր կեանքի
զգացւած և բարի տրամադրւած բողէներում՝ խա-
ղացած կը լինի անշուշտ բարեգործ հերոսի դեր: Նա
շատ կը ցանկայի գիտենալ, թէ նոցանից քանիսը
հաճութիւն կզգային պատմել իրանց հետ պատա-
հած դէպքերը բոլոր նոցա մանրամասնութիւններով
և հետեանքներով:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էրես
1. Ամուսինների վրդովմ. բկացաւի պատճառով.	5
2. Տիկին Ուիլեամսը և կայծակը.	18
3. Իմ առաջին զրականական փորձը.	32
4. Իմ ժամացոյցի արկածքները.	38
5. Փրկարար ձայնը.	46
6. Սափրիչների մասին.	59
7. Նոր քրէական մի բառ.	67
8. Միջնադարեան վէպ.	77
9. Խրատական մի տեսակ առաջնորդի մասին. .	92



Ա. ՆԱՄՍՈՒԵՍՆԻ

1) «ՀԱՐՆԻԱՆՆԵՐ»	3	կող.
2) «ՄԻՆԱՍԻ ԵԶՐ»	4	»
3) «ԵԶԻԿ ԱԴԶԻԿԸ»	5	»
4) «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆԻԲԸ»	3	»
5) «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	3	»
6) «ՄԵՐ ԻՆՁ ԿԸ ՊԱԿՍԻ»	3	»

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Վաճառում է Թիֆլիսի հայ դրամաժուանոցներում
և «Մուրճ»-ի խմբագրատանը:

1147

2013

